



International Foundation
for Electoral Systems

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ



ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Ֆերնանդա Բուրիլ, գ.թ.
Հետազոտությունների ավագ մասնագետ, IFES

Ստաֆան Դարնոլֆ, գ.թ.
Համաշխարհային ընտրական գործընթացների և կառավարման հարցերով
ավագ խորհրդատու, IFES

Մուլուկեն Ասերեսա, ք.գ.թ.
Տեխնիկական հարցերով ավագ խորհրդատու,
«Առողջապահական հարցերի կառավարման գիտություններ»

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ

Էրիկա Շեյն
Կիրառական հետազոտությունների և ուսուցման կենտրոնի տնօրեն, IFES

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ

Չադ Վիքերի
Գլոբալ ռազմավարության և տեխնիկական առաջնորդության հարցերով
փոխնախագահ, IFES

Անջելա Քենթերբերի
Ռազմավարական հաղորդակցության և շահերի պաշտպանության հարցերով
տնօրեն, IFES

IFES COVID-19 ճեպագրույցների շարք. Ընտրություններ և առողջության պաշտպանություն:
Հեղինակային իրավունք © 2020 Ընտրական համակարգերի միջազգային հաստատություն:
Բոլոր իրավունքները պաշտպանված են.

Թույլտվություն. Սույն աշխատանքի ոչ մի մաս չի կարող վերարտադրվել որևէ ձևով կամ եղանակով՝ էլեկտրոնային կամ մեխանիկական, ներառյալ՝ պատճենահանումը, ձայնագրումը, կամ տեղեկատվության պահպանման և որոնման ցանկացած համակարգով՝ առանց IFES- ի գրավոր թույլտվության:

Թույլտվության համար ներկայացված հայտը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը.

- Պատճենման համար հայցվող նյութի նկարագրությունը
- Պատճենված նյութի օգտագործման նպատակն ու ձևը
- Ձեր անունը, պաշտոնը, ընկերության կամ կազմակերպության անվանումը, հեռախոսի համարը, ֆաքսի համարը, էլ. փոստի հասցեն և փոստային հասցեն:

Թույլտվության հայցման հայտն ուղարկել հետևյալ հասցեով՝

Ընտրական համակարգերի միջազգային հաստատություն

2011 Crystal Drive, 10-րդ հարկ Arlington, VA 22202

էլ. փոստ՝ editor@ifes.org

հեռ.՝ 202.350.6701

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	1
Երախտիքի խոսք.....	2
Ամփոփագիր.....	3
Ներածություն	3
Ընտրություններ և հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակներ	8
Ինչ է COVID-19-ը	9
Փաստաթղթի նպատակ և կառուցվածք	11
Հիմնական արդյունքներ և առաջարկություններ	12
Ընդհանուր դիտարկումներ COVID-19-ի շրջանում հանրային առողջապահական ռիսկերի նվազեցման վերաբերյալ	12
Համագործակցություն առողջապահության ոլորտի պետական մարմինների և այլ համապատասխան ինստիտուտների հետ	14
I փուլ. նախընտրական գործողություններ	15
II փուլ. Ընտրությունների օր և հետընտրական գործընթացներ	31
Մշտադիտարկում և որակի վերահսկում	38
Ծանոթագրություններ	39

ՆԱԽԱԲԱՆ

COVID-19-ի ճգնաժամը կործանարար հետևանքներ ունեցավ ամբողջ աշխարհի մարդկային կյանքերի, տնտեսությունների և առողջապահական համակարգերի համար: Համավարակի տարածումը համընկավ նաև ժողովրդավարությունների համար առանձնահատուկ ծանր շրջանի հետ: Մոտ երկու տասնամյակի ընթացքում առաջին անգամ պետությունների մեծ մասը (92 պետություն՝ «Ժողովրդավարության բազմազանություն» զեկույցի 2020թ. տվյալների համաձայն¹), բնորոշվում են որպես ավտորիտար պետություններ: Ավտորիտարիզմի այդ «երրորդ ալիքն» ընդգրկեց նույնիսկ այն տարածքները, որոնք տևական ժամանակահատված համարվում էին ժողովրդավարության ամրոցներ: Ներկայումս COVID-19-ի ճգնաժամը նոր հնարավորություններ է ստեղծել ապագա «ավտորիտար առաջնորդների» համար՝ ավելի ամրապնդելու իրենց իշխանությունը պետական կառույցներում և խարխուլելու մարդու իրավունքների պաշտպանության գործընթացը:

Այս դժվարին ժամանակաշրջանում առանձնահատուկ կարևոր է, որ պետական իշխանությունները, կուսակցությունները և թեկնածուները, քաղաքացիական հասարակությունն ու միջազգային համայնքը միավորեն իրենց ջանքերը՝ ինչպես քաղաքացիների առողջությունը, այնպես էլ ժողովրդավարությունների «առողջությունը» պաշտպանելու նպատակով: Ընտրությունները կազմում են այդ գործընթացի առանցքային տարր, քանզի դրանք ամրապնդում են ժողովրդավարական ինստիտուտները և իրավունքի գերակայությունը: Այդպիսի ճգնաժամերի ընթացքում ընտրությունների շահարկումը կամ ոչ պատշաճ անցկացումը կարող են հանգեցնել հիմնարար ազատությունների տևական խախտմանը, իշխանության կենտրոնացմանը և կոռուպցիային: Ճգնաժամի պայմաններում ընտրական գործընթացում ներգրավված անձինք պետք է գործեն վճռական և թափանցիկ կերպով՝ միաժամանակ հաշվի առնելով հետագա հնարավոր զարգացումները: Եթե նրանք հապաղեն, ապա հնարավոր է արդեն ուշ լինի նվազեցնել ինչպես հանրային առողջության, այնպես էլ ժողովրդավարական իրավունքների հետ կապված ռիսկերը՝ հետաձգված կամ ոչ պատշաճ կազմակերպված ընտրությունների պատճառով:

Ընտրական համակարգերի միջազգային հասատությունը (IFES)¹ որպես ամբողջ աշխարհում ընտրությունների կառավարման մարմինների հուսալի գործընկեր, տրամադրում է ճշգրիտ տեղեկատվություն և որոշումների կայացումն ուղղորդող առողջ տեխնիկական խորհրդատվություն: Դրա նպատակն է աջակցել անվտանգ և արժանահավատ ընտրությունների կազմակերպմանը: Հանրային առողջապահական ոլորտի փորձագետների հետ խորհրդատվության և համատեղ աշխատանքի արդյունքում ձևավորված սույն փաստաթուղթը նոր մարտահրավերներին հարմարվելու և գործընկերների հետ աճելու մեր շարունակական ջանքերի արդյունքն է: Միասին, ինչպես միշտ, մենք կշարունակենք հաղթահարել խոչընդոտները և կառուցել ժողովրդավարություններ, որոնք նպաստավոր կլինեն բոլորի համար:



Լիսա Գաստալդի

IFES- ի նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն

1 Anna Lührmann, Seraphine F. Maerz, Sandra Grahn, Nazifa Alizada, Lisa Gastaldi, Sebastian Hellmeier, Garry Hindle and Staffan I. Lindberg. 2020. Autocratization Surges – Resistance Grows. Democracy Report 2020. Varieties of Democracy Institute (V-Dem). Retrieved from https://www.v-dem.net/media/finder_public/f0/5d/f05d46d8-626f-4b20-8e4e-53d4b134bfc/democracy_report_2020_low.pdf

Երախտիքի խոսք

Հեղինակները ցանկանում են իրենց երախտա փ տու թյո նը հայտ նել «Առողջապահական հարցերի կառավարման գիտություններ» խորհրդի դատվա կան կազմա կերպու թյան, հանրային առողջապահության հարցերով գլխավոր տնօրեն, բժշկական գիտությունների դոկտոր Էլկեթյոն Նինգսին, Ուկրաինայում IFES ծրագրի խորհրդի փոխտնօրեն Մեթոդիս Է փլգեյթին, գլխավոր ներառական կառավարման հարցերով IFES-ի ազգային խորհրդի փոխտնօրեն Վիկտոր Չիկոստանյան, գեներալ ռային ծրագրի փոխտնօրեն Գրեգորի Բաբայան, IFES-ի գրաֆիկական ձևավորման գծով պատասխանատու Ջանին Դաֆինսոն, սոցիալական փոփոխության ռազմավարության և իրենց անգնահատելի ներդրման համար

Մի քանի խոսք հեղինակների կողմից

IFES-ը փորձել է կազմել հնարավորինս համապարփակ ուղեցույց՝ միաժամանակ պահպանելով դրա կիրառելիությունն ու օգտակարությունը տարբեր ընտրական համակարգերի դեպքում: Այդուհանդերձ, որոշ առաջարկությունների իրագործման հնարավորությունը մեծապես կախված է յուրաքանչյուր երկրի օրենսդրական շրջանակներից: Հարկ է նաև նշել, որ համավարակի նոր դրսևորումների և մարդկային առողջության վրա դրա ունեցած ազդեցության վերաբերյալ փաստերն օրեցօր փոփոխվում են: Սույն փաստաթղթում ներկայացված ուղենիշները հիմնված են դրա հրապարակման պահին COVID-19-ի վերաբերյալ ունեցած գիտելիքի վրա:

Թեև ներկայացված առաջարկությունները նախատեսված են առողջության ուղղված ռիսկերը նվազագույնի հասցնելու և ընտրությունների կազմակերպիչների ու ընտրողների՝ ընտրություններին մասնակցության նկատմամբ, վստահությունը մեծացնելու համար, այդուհանդերձ տարբեր համատեքստեր առաջադրում են տարբեր մակարդակի սպառնալիքներ: Ընտրությունների անցկացման վերաբերյալ որոշումը ոչ բոլոր դեպքերում կարող է լինել լավագույն տարբերակը: Ընտրական գործընթացների անցկացման հնարավորության և դրանց ձևի վերաբերյալ որոշումները պետք է հիմնվեն պետական առողջապահական ոլորտում իրավասու մարմինների հետ համատեղ մշակված ռիսկերի համապարփակ գնահատումների վրա: Քանի որ ընտրություններն իրենց բնույթով քաղաքական իրադարձություններ են, հանրային առողջապահական ճգնաժամի պայմաններում ընտրությունների անցկացման հարցի շուրջ քննարկումները կարող են լինել ավելի արդյունավետ, եթե դրանցում ներգրավված լինեն նաև կուսակցություններն ու քաղաքացիական հասարակությունը, և եթե դրանք հիմնված լինեն բոլոր հնարավոր ռիսկերի գնահատման վրա:

Ներածություն

Ընտրությունները, որպես կանոն, ներառում են մեծ, համաժողովրդական կուտակումներ ոչ միայն դրանց անցկացման օրը, այլև, օրինակ, քարոզարշավների և ընտրարշավների ժամանակ: Այդ գործընթացները մեծացնում են մարդկային շփումները և, հետևաբար, հիվանդության ուղղակի ու անուղղակի փոխանցման ռիսկերը: Սահմանափակ թվով Ընտրությունների վարչարարության մարմիններ (ԸՎՄ) են մշակել համապարփակ ծրագրեր՝ հիվանդության լայնամասշտաբ տարածման պայմաններում ընտրական գործընթացների կառավարման վերաբերյալ: Արդյունքում, հանրային առողջապահության ոլորտում ճգնաժամերի հանկարծակի բռնկման ժամանակ առաջանում է ժամանակի, ռեսուրսների և տեղեկատվության պակաս՝ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու և ընտրական գործընթացներն անվտանգ անցկացնելու համար: Դա հաստատվեց նաև COVID-19 համավարակի օրինակով: Դրա արդյունքում աշխարհի գրեթե 60 երկրներում և տարածքներում հետաձգվել են համապետական կամ տարածքային ընտրությունները¹: Որոշ ԸՎՄ-ներ, որոնք, այդուհանդերձ, որոշում են կայացրել անցկացնել ընտրությունները ճգնաժամի պայմաններում, մեծամասամբ չեն կարողացել լուծել հանրային առողջապահական խնդիրները², ինչը հանգեցրել է մասնակցության ցածր ցուցանիշի, արդյունքների արժանահավատության հետ կապված խնդիրների, ընտրատեղամասերի որոշ աշխատակիցների ազատմանը և նույնիսկ ընտրությունների կազմակերպիչների վարակման դեպքերի³:

Ընտրական համակարգերի միջազգային հաստատությունը (IFES)⁴ «Առողջապահական հարցերի կառավարման գիտություններ» խորհրդատվական կազմակերպության հետ համատեղ, մշակել է սույն փաստաթուղթը՝ ԸՎՄ-ներին աջակցելու նպատակով ամբողջ աշխարհով մեկ, որպեսզի վերջիններս կարողանան կողմնորոշվել ստեղծված բարդ իրավիճակում: Փաստաթուղթը կենտրոնացած է հանրային առողջապահական խնդիրների վերաբերյալ ընդհանուր դիտարկումների վրա, որոնք վերաբերում են բոլոր առանցքային ընտրական գործընթացներին: Ներկայացված են առաջարկություններ, որոնք ուղղված են նվազեցնելու COVID-19 համավարակի փոխանցման ռիսկերը: Դրանք հիմնված են այնպիսի առողջապահական մարմինների ընդհանուր ցուցումների վրա, ինչպիսիք են Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) և ԱՄՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնը (ՀՎԿԿ), ինչպես նաև հրապարակման պահի դրությամբ վերջին փաստերի և գիտական ուսումնասիրությունների, և նման համատեքստերում ԸՎՄ-ների կողմից իրականացված լավագույն փորձի ու հաջողված մեխանիզմների վրա:

Խնդրի սահմանում

Քանի որ ԸՎՄ-ներն ունեն սահմանափակ ժամանակ և ռեսուրսներ՝ իրենց գործընթացներում նոր ընթացակարգեր ներդնելու և համապատասխան միջոցների առկայությունն ապահովելու համար, անհրաժեշտ է, որ ռիսկերի նվազեցմանն ուղղված ջանքերը կազմեն ռեսուրսներն օպտիմալացնելու համընդգրկուն ռազմավարության մաս, որը հիմնված կլինի կոնկրետ միջավայրում COVID-19-ի ռիսկերի գնահատման վրա: Արդյունավետ կիրառման դեպքում այդ միջոցները կարող են զգալիորեն նվազեցնել հիվանդության փոխանցման ռիսկերը և ողջամիտ կերպով մեղմել ընտրական գործընթացների ժամանակ մարդկանց շրջանում առկա վարակվելու վախը: Հակառակ դեպքում, կարող է արձանագրվել մասնակցության ցուցանիշի կտրուկ նվազում և ընտրական արդյունքների լեգիտիմության խնդիր:

Հարկ է նաև նշել, որ թեև սույն փաստաթղթում ներկայացված առաջարկությունները կօգնեն նվազագույնի հասցնել հանրային առողջապահական ռիսկերը և կմեծացնեն ընտրողների ու ընտրությունների կազմակերպիչների վստահությունն ընտրությունների նկատմամբ, տարբեր համատեքստեր առաջադրում են տարբեր մակարդակի սպառնալիքներ, և առկա կարգով ընտրությունների անցկացումը միշտ չէ, որ կարող է լինել լավագույն տարբերակը: Ընտրական գործընթացների իրականացման հնարավորության և դրանց ձևի վերաբերյալ որոշումները կլինեն ավելի արդյունավետ, եթե դրանք

- խարսխվեն հանրային առողջապահության ոլորտում իրավասու մարմինների հետ համատեղ իրականացված ռիսկերի համապարփակ գնահատումների վրա,
- հաշվի առնեն երկրի ընտրատարածքների ամբողջ սպեկտրը ներկայացնող կուսակցությունների և քաղաքացիական հասարակության դերակատարների պատկերացումները,
- հիմնվեն ճգնաժամի պայմաններում ընտրությունների անցկացման հետ կապված բոլոր ռիսկերի ընդհանուր դիտարկման վրա:

Հիմնական արդյունքներ և առաջարկություններ

ԱՀԿ-ի⁴ և ԱՄՆ ՀՎԿԿ-ի⁵ ներկայացրած վերջին տվյալների համաձայն, COVID-19 համավարակը հիմնականում փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով, սակայն նոր համավարակը կարող է փոխանցվել նաև ֆոմիտների՝ վիրուսով աղտոտված առարկաների կամ մակերևույթների, հետ անուղղակի շփման արդյունքում: Ընտրական գործընթացի ավելի քան 40 դրվագ կապված է մարդկանց կուտակումների կամ ընդհանուր առարկաների օգտագործման հետ: Հետևաբար, համապատասխան կանխարգելիչ միջոցներ չձեռնարկելու դեպքում կլինեն հիվանդության փոխանցման զգալի ռիսկեր: Այդ ընդհանուր փոխազդեցությունները սահմանափակված չեն միայն ընտրությունների անցկացման օրով: Դրանք տեղի են ունենում ընտրական ցիկլի բոլոր փուլերում: Հաշվի առնելով համավարակի տարածման այդ կոնկրետ եղանակները՝ ստորև ներկայացված առաջարկությունները վերաբերում են ընտրական գործընթացի բոլոր միջոցառումներին:

- **Հաղորդակցվել և համագործակցել հանրային առողջապահության ոլորտի իրավասու մարմինների հետ՝** ռիսկերի վերլուծության, որոշումների կայացման, ռիսկերի նվազեցմանն ուղղված ռազմավարությունների պլանավորման և արդյունավետ իրականացման հարցերի շրջանակում:
- **Կանխել կամ նվազեցնել միջանձնային շփումները.** պարտադրել սոցիալական հեռավորության և շնչառական հիգիենայի պահպանում, անձնական պաշտպանիչ միջոցների օգտագործում, հնարավորության դեպքում հեռավար գործիքների և մեխանիզմների կիրառում:
- **Կանխել կամ նվազեցնել ընդհանուր մակերևույթների և առարկաների աղտոտումը.** պարտադրել անձնական պաշտպանիչ միջոցների (դիմակների) օգտագործում և շնչառական հիգիենայի պահպանում, հնարավորության դեպքում անհպում մեխանիզմների կիրառում:
- **Կանխել կամ նվազեցնել մարդկային շփումն աղտոտված մակերևույթների և առարկաների հետ.** խրախուսել ձեռքերի ախտահանումն օճառով և ջրով կամ ալկոհոլային լուծույթներով, կոչ անել չդիպչել բերանին, քթին և աչքերին, հաճախակի ախտահանել օգտագործված առարկաներն ու մակերևույթները, պարտադրել անձնական պաշտպանիչ միջոցների օգտագործում, հնարավորության դեպքում անհպում մեխանիզմների կիրառում:

Ի լրումն այս կարևոր համընդգրկուն միջոցառումների, ԸՎՄ-ները կշահեն նաև այն դեպքում, եթե ընտրական գործընթացի յուրաքանչյուր փուլի ժամանակ հաշվի առնեն ստորև ներկայացված առաջարկությունները:

Գծապատկեր 1. Դիտարկումներ ընտրական գործողությունների վերաբերյալ

Ընտրական գործողություն	Լրացուցիչ դիտարկումներ
Ընտրությունների և ռեսուրսների պլանավորում	<p>Ընտրությունները հետաձգելիս՝ ապահովել իրավական նորմերի պահպանումը, մշակել սցենարներ՝ ընտրությունները հնարավորինս շուտ անցկացնելու և գործառնական պլանում, օրացույցում ու բյուջեում անհրաժեշտ ճշգրտումներ կատարելու համար, հանրությանը ներկայացնել վերջին թարմացումները:</p>
	<p>Ընտրությունները պլանավորելիս՝ հաշվի առնել վարակի տարածման աստիճանը, բռնկման փուլը, առողջապահական համակարգի ներուժն ու կառուցվածքը, եղանակը/սեզոնը:</p>
	<p>Կարգավորել գործընթացներն ու ընթացակարգերը՝ տարածման ռիսկերը նվազեցնելու համար, սահմանել և ձեռք բերել լրացուցիչ նյութեր, սարքավորումներ և պարագաներ, վարձել լրացուցիչ աշխատողների, վերահսկել մատակարարման շղթայի հնարավոր խափանումները:</p>
	<p>Ապահովել ֆինանսական միջոցներ՝ լրացուցիչ նյութերի, սարքավորումների, անձնակազմի և գործընթացների համար, սահմանել առաջնային կարիքները և օպտիմալացնել առավելագույն նվազեցնող ուժ ունեցող ռեսուրսները:</p>
Նախընտրական քարոզարշավ	<p>Տարածել COVID-19-ի վերաբերյալ տեղեկատվություն և ցուցումներ կուսակցությունների, թեկնածուների, քաղաքացիական հասարակության և ՋԼՄ-ների միջոցով, մշակել վարքագծի կոդեքսներ կամ ներառել COVID-19 համավարակին առնչվող հարցերը գործող կոդեքսներում:</p>
	<p>Հայտնաբերել և պատժամիջոցներ սահմանել այն անձանց նկատմամբ, ովքեր տարածում են COVID-19-ի վերաբերյալ ապատեղեկատվություն քաղաքական շահի համար:</p>
	<p>Տրամադրել նախագգուշական առողջապահական ցուցումներ հանրահավաքների, բանավեճերի և այլ հավաքների անցկացման համար:</p>
Ընտրողների իրազեկում	<p>Ընտրողներին տրամադրել հստակ, հասանելի և հաճախակի թարմացվող տեղեկատվություն COVID-19-ի, դրա տարածման եղանակների և դրա դեմ պայքարի միջոցների վերաբերյալ, հետևել առողջապահական գրագիտության լավագույն փորձերին (կարճ հաղորդագրություններ, ազդեցիկ հայտարարություններ/ուղիղ խոսք, ծանոթ բառապաշար, մշակութային առումով կարևոր պատկերներ):</p>
	<p>Քաղաքացիներին տրամադրել հստակ, հասանելի և հաճախակի թարմացվող տեղեկատվություն նոր ընտրական ընթացակարգերի և դրանց պահպանման վերաբերյալ:</p>
	<p>Պայքարել հիվանդության վերաբերյալ ապատեղեկատվության և խոցելի կամ մարգինալացված խմբերի նկատմամբ ատելության խոսքի դեմ:</p>
Ընտրատեղամասերի աշխատակիցների և այլ աշխատողների հավաքագրում ու վերապատրաստում	<p>Հնարավորության դեպքում օգտագործել առցանց հարթակներ՝ անձնակազմի դիմումները ստանալու և վերանայելու համար: Անհատական հարցաքույց անցկացնելու դեպքում պահպանել սոցիալական հեռավորություն, խրախուսել դիմորդների և հարցազրուցավարների կողմից ձեռքերի ախտահանումն ու դիմակների օգտագործումը:</p>

Ընտրական գործողություն	Լրացուցիչ դիտարկումներ
Ընտրատեղամասերի աշխատակիցների և այլ աշխատողների հավաքագրում ու վերապատրաստում	Ազատել ռիսկային խմբերում գտնվող անձանց և բուժաշխատողներին ընտրատեղամասի աշխատակցի պարտականություններից:
	Ազատել ռիսկային խմբերում գտնվող անձանց և բուժաշխատողներին ընտրատեղամասի աշխատակցի պարտականություններից:
	Ներառել COVID-19 համավարակի՝ հատկապես դրա տարածման եղանակների և կանխարգելիչ միջոցների, վերաբերյալ տեղեկատվություն վերապատրաստման դասընթացների բովանդակության մեջ:
	Ներառել ցուցումներ COVID-19-ի արդյունքում ընդունված նոր ընթացակարգերի վերաբերյալ:
	Վերապատրաստման համար ընտրել այնպիսի տարածքներ, որոնք թույլ կտան պահպանել բավարար սոցիալական հեռավորություն: Ապահովել վերապատրաստման դասընթացների ժամանակ ձեռքերի ախտահանումը և համապատասխան անձնական պաշտպանիչ միջոցների հասանելիությունը բոլոր մասնակիցների համար:
	Ապահովել ներառականությունն ու առցանց/հեռավար ուսուցման նոր տարբերակների հասանելիությունը:
	Առցանց դասընթացների համար ներդնել այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն դրանց հաջող ավարտը:
Ընտրողների գրանցում, թեկնածուների գրանցում, քվեարկություն, քվեների հաշվարկ և արդյունքների ամփոփում	Ընտրել այնպիսի տարածքներ, որոնցում հնարավոր կլինի ապահովել սոցիալական հեռավորություն: Տարածքները պետք է լինեն ռիսկային խմբերում գտնվող անձանց բնակության վայրերից հեռու, թեև պետք է ձեռնարկվեն նաև այլընտրանքային միջոցներ՝ այդ խմբերի մասնակցությունը ևս ապահովելու համար:
	Կրճատել տվյալ պահին հաստատության ներսում գտնվող անձանց թիվը՝ ավելացնելով օրերի կամ տարածքների քանակը, խմբերին կցել կոնկրետ տարածքների:
	Մշակել և ներդնել COVID-19-ի ռիսկերի նվազեցմանն ուղղված վարքագծի կանոններ՝ հերթերի, շենքեր ելքի ու մուտքի վերաբերյալ:
	Ներկայացնել COVID-19-ի վերաբերյալ հանրային տեղեկատվականություն:
	Ապահովել ձեռքերի ախտահանման համար նախատեսված բավարար կետեր:
	Ընտրողներին կոչ անել իրենց հետ վերցնել և օգտագործել սեփական գրիչները:
	Մշակել անհպում մեխանիզմներ՝ անձի ինքնության ստուգման համար:
	Առանձնացնել սոցիալական հեռավորության պահանջներին համապատասխանող տարածքներ՝ քվեաթերթիկների լրացման համար:
Ապահովել սեղանների և աթոռների անհրաժեշտ հեռավորությունն ընտրատեղամասի աշխատակիցների, դիտորդների, կուսակցությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչների համար, տարածքներից դուրս բերել խմբակային նստատեղերը և այլ՝ ոչ անհրաժեշտ առարկաները, տեղադրել օրգանական ապակիներ կամ այլ թափանցիկ պաշտպանիչ թաղանթներ այն սեղանների և մակերեսների վրա որտեղ առկա է ընտրողների և հանձնաժողովի անդամների միջև շփում:	

Ընտրական գործողություն	Լրացուցիչ դիտարկումներ
Ընտրողների գրանցում, թեկնածուների գրանցում, քվեարկություն, քվեների հաշվարկ և արդյունքների ամփոփում	<p>Մաքրման և ախտահանման պատշաճ իրականացումն ապահովելու համար՝ կապ հաստատել ախտահանիչ միջոցներ արտադրող և մատակարարող ընկերությունների հետ:</p>
	<p>Անվտանգ եղանակով հավաքել և հեռացնել թափոնները:</p>
	<p>Հնարավորության դեպքում փոստային ձևաթղթերի և քվեաթերթիկների համար օգտագործել ինքնաստանձվող ծրարներ:</p>
	<p>Ապահովել առցանց/հեռավար մեխանիզմների ներառականությունն ու հասանելիությունը:</p>
Պետական և միջազգային դիտորդների ու կուսակցությունների լիազոր ներկայացուցիչների հավատարմագրում	<p>Թեև սահմանված չափանիշներին համապատասխանող որևէ քաղաքացի չպետք է զրկված լինի ընտրություններում որպես դիտորդ հանդես գալու իրավունքից, այդուհանդերձ, այնպիսի արտակարգ իրավիճակներում, ինչպիսին է, օրինակ, հանրային առողջապահական ճգնաժամը, ազատել ռիսկային խմբերում գտնվող անձանց և բուժաշխատողներին դիտորդի կամ կուսակցության լիազոր ներկայացուցչի պարտականություններից կամ նրանց զգուշացնել մասնակցության բոլոր հնարավոր ռիսկերի մասին:</p>
	<p>Դիտորդների հավատարմագրման գործընթացի շրջանակում հետևել այն նույն նախազգուշական միջոցներին, ինչ վերոնշյալ «ընտրողների գրանցման, թեկնածուների գրանցման և քվեարկության» գործընթացների դեպքում:</p>

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտրությունները, որպես կանոն, ներառում են մարդկանց զանգվածային կուտակումներ ոչ միայն դրանց անցկացման օրը, այլև, օրինակ, քարոզարշավների և ընտրողների գրանցման փուլերի ընթացքում: Այդ միջոցառումները մեծացնում են մարդկային շփումները և ուղղակի ու անուղղակի ռիսկերը՝ կապված վարակված մակերևույթների միջոցով վիրուսի տարածման հետ: Դրանց անցկացումը հիվանդության բռնկման պայմաններում կարող է լուրջ ռիսկեր առաջացնել հանրային առողջության համար: Միաժամանակ, դրանց չեղարկումը կարող է նաև խաթարել դժվարությամբ ձեռք բերված կայունությունն ու ժողովրդավարական ինստիտուտների նկատմամբ վստահությունը: Այդ երկրներում առջև կանգնած իշխանությունները պետք է որոշեն, թե արդյոք ընտրությունների անցկացումը նպատակահարմար է, թե ոչ և, եթե՝ այո, ապա արագ արձագանք են այն նոր մարտահրավերներին, որոնք հիվանդության բռնկումն առաջադրել է ընտրական գործընթացի համար: Հնարավոր է, որ իշխանություններից պահանջվի կատարել ճշգրտումներ ընտրական գործընթացի ժամանակացույցում, կիրառել նոր և վերանայված ընթացակարգեր, որոնք կնվազեցնեն վարակի տարածման ռիսկերը, ապահովել անհրաժեշտ ֆինանսավորում և ձեռք բերել անհրաժեշտ պարագաներ: Նրանք պետք է իրենց գործողությունները համակարգեն քաղաքական դաշտի բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Դրա նպատակն է ապահովել փոփոխությունների իրականացման հնարավորությունն ու դրա շուրջ համընդհանուր համաձայնությունը, քանզի ընտրական գործընթացի փոփոխություններն ավելի մեծ հավանականությամբ կհաջողեն և կլինեն ընդունելի, եթե դրանք լինեն որոշումների կայացման մասնակցային գործընթացի արդյունք:

Ընտրություններ և հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակներ

ԱՀԿ-ն սահմանում է հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակները որպես «հիվանդության առաջացում կամ առողջական վիճակին անմիջական սպառնալիք՝ բիոսահաբեկչության, էպիդեմիայի, պանդեմիայի կամ նոր և մահաբեր վարակի կամ կենսաբանական տոքսինի պատճառով, որը կարող է հանգեցնել մահացության կամ մշտական կամ երկարաժամկետ հաշմանդամության⁶: Հանրային առողջապահության ոլորտի ճգնաժամի կառավարման փորձագետները ևս օգտագործում են ճգնաժամի բավական լայն սահմանում՝ բարդ համատեքստում խելամիտ որոշումների կայացման կարևորությունն ընդգծելու համար:

Ճգնաժամը «լուրջ սպառնալիք է համակարգի հիմնական ենթակառուցվածքների կամ հիմնարար արժեքների ու նորմերի համար, որը ժամանակի սղության և խիստ անորոշ հանգամանքների պատճառով պահանջում է ծայրահեղ որոշումների կայացում⁷: Վերջիններս վերաբերում են ոչ միայն երկրի առողջապահական համակարգին, այլև գործունեության այն բոլոր ոլորտներին, որոնք կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստել խնդրի սրացմանը և ճգնաժամին արձագանքող անձանց ու համակարգերի ծանրաբեռնվածությանը:

“ ...Հանրային առողջապահական ճգնաժամի պայմաններում ընտրությունների անցկացումը հնարավոր է, սակայն անհրաժեշտ է մանրակրկիտ պլանավորում՝ ստեղծված ծանր իրավիճակն ավելի չսրելու համար:

Քանզի ընտրությունները և ընտրական միջոցառումները սովորաբար ներառում են մարդկանց զանգվածային կուտակումներ, դրանք կարող են արագացնել հիվանդությունների տարածումը, որոնց փոխանցման եղանակները ներառում են ուղղակի կամ անուղղակի միջանձնային շփումներ: Առանց ռիսկերի նվազեցման

ուղղված համապատասխան ռազմավարությունների՝ ընտրական գործընթացները կարող են հանգեցնել դեպքերի թվի կտրուկ աճի, և գերծանրաբեռնված առողջապահական համակարգը մոտեցնել քայքայման: Չնայած մի շարք մարտահրավերներին՝ որոշ երկրներ կարողացել են հանրային առողջապահության ոլորտի ճգնաժամի պայմաններում անցկացնել հարաբերականորեն հաջող ընտրություններ, ինչպես, օրինակ, Միացյալ Նահանգները 1918թ. իսպանական հարբուխի համավարակի ժամանակ⁸, Լիբերիան 2014թ. էբոլայի բռնկման շրջանում⁹ և վերջերս Հարավային Կորեան՝ ներկայիս COVID-19 համապարակի պայմաններում¹⁰: Այդ երկրները ցույց տվեցին, որ հանրային առողջապահական ճգնաժամի պայմաններում ընտրությունների անցկացումը հնարավոր է, սակայն անհրաժեշտ է մանրակրկիտ պլանավորում՝ ստեղծված ծանր իրավիճակն ավելի չսրելու համար:

Ինչ է COVID-19-ը

COVID-19-ը 2019թ. բռնկված կորոնավիրուսային վարակիչ հիվանդություն է, որն առաջացել է SARS-CoV-2 կորոնավիրուսի արդյունքում՝ նոր շտամ, որն առաջին անգամ հայտնաբերվել է մարդկանց մոտ 2019թ. վերջին: Ենթադրվում է, որ վիրուսն առաջին անգամ մարդկանց փոխանցվել է Չինաստանի Հուբեյ նահանգի մայրաքաղաք Ուհան քաղաքում ծովամթերքի և թռչնամսի շուկայում վաճառված չղջիկների կամ պանգոլիների (թեփամորթներ) միջոցով¹¹: Հիվանդությունն արագ տարածվեց ամբողջ աշխարհում, և 2020թ. մարտի 11-ին ԱՀԿ-ի կողմից որակվեց որպես համավարակ¹²:

Սույն փաստաթղթի մշակման պահի դրությամբ, հաստատվել է COVID-19-ի գրեթե 4 միլիոն դեպք 212 երկրներում և տարածքներում՝ հանգեցնելով ավելի քան 270,000 մահվան դեպքերի:

Ախտանշանները

ԱՀԿ-ի համաձայն¹³, COVID-19-ի հիմնական ախտանշաններն են ջերմությունը, հազը, հևոցը կամ դժվարացած շնչառությունը: ԱՄՆ ՀՎԿԿ-ն¹⁴ նշում է նաև մկանային ցավը, գլխացավը, դողը և համի ու հոտի կորուստը՝ որպես COVID-19-ի պոտենցիալ ախտանշաններ:

Թեև տարբեր ուսումնասիրություններում նշվում են տարբեր տվյալներ, ենթադրվում է, որ նոր կորոնավիրուսով վարակվածների զգալի տոկոսը չի ունենում որևէ ախտանշան կամ ունենում է միայն թույլ արտահայտված ախտանշաններ: Տվյալները ցույց են տալիս, որ նույնիսկ նախաախտանշաններ (առաջին ախտանշաններին նախորդած մի քանի օրը) և թույլ արտահայտված ախտանշաններ ունեցող անձինք կարող են դառնալ հիվանդության տարածողներ¹⁵: Հնարավոր է նաև, որ որևէ ախտանշան չունեցող անձինք՝ COVID-19-ի թեստի դրական արդյունքով, լինեն վարակի «լուռ տարածողներ»¹⁶, ինչն էլ ավելի է բարդացնում վարակի տարածման նվազեցմանն ուղղված միջոցառումները: Տվյալները փաստում են, որ ինկուբացիոն շրջանը՝ վարակի հայտնվելուց մինչև SARS-CoV-2-ի ախտանշանների զարգացումը, տևում է 2-14 օր¹⁷:

Առավել ծանր դեպքերում վարակը կարող է առաջացնել թոքաբորբ, սուր շնչառական համախտանիշ և մահացություն: Տարեցները և խրոնիկ հիվանդություն ունեցողները գտնվում են ավելի բարձր ռիսկային խմբում¹⁸: Սույն փաստաթղթի հրապարակման պահին COVID-19-ի դեմ հաստատված պատվաստանյութ կամ բուժում չկա, թեև բժշկական փորձարկումները շարունակվում են:

Տարածման եղանակները

ԱՀԿ-ի¹⁹ և ԱՄՆ ՀՎԿԿ-ի²⁰ տվյալների համաձայն, կորոնավիրուսը հիմնականում փոխանցվում է մարդուց մարդ: Սոցիալական հեռավորություն չպահպանելու դեպքում վարակը կարող է տարածվել օդակաթիլային ճանապարհով (երբ վարակված անձը հազում, փռշտում կամ խոսում է)՝ ներթափանցելով դիմացինի բերան, քիթ և, հնարավոր է նաև, աչքեր: Դրա արդյունքում COVID-19-ը համարվում է ավելի վտանգավոր վարակի տեսակ բնականոն ընտրական գործընթացների ժամանակ քան, օրինակ, էբոլան, որն առավել հաճախ տարածվում է մարմնի ավելի խոշոր կաթիլների միջոցով, ինչպիսիք են, օրինակ, քրտինքը, փսխումը և արյունը:

Կորոնավիրուսը կարող է տարածվել նաև ֆոնիտների (վարակով աղտոտված առարկաներ կամ մակերևույթներ) հետ անուղղակի շփման արդյունքում, երբ առողջ մարդը դիպչում է աղտոտված մակերևույթների, այնուհետև՝ սեփական բերանին, քթին և, հնարավոր է նաև, աչքերին: Հաշվի առնելով ընտրությունների կազմակերպիչների, թեկնածուների և դիտորդների միջև փաստաթղթերի, ձևաթղթերի և այլ նյութերի հաճախակի փոխանակումը և ընդհանուր սարքերի օգտագործումը, ինչպիսիք են, օրինակ, մատնահետքի սկաները, էլեկտրոնային քվեարկության մեքենաները անուղղակի տարածման ռիսկերը զգալի են և պետք է նվազեցվեն համապատասխան մեխանիզմների կիրառմամբ:

Անշունչ առարկաների վրա SARS-CoV-2-ի պահպանման տևողությունը նույնն է, ինչ այլ համավարակների դեպքում, և կախված է մակերևույթի նյութի տեսակից, ինչպես ներկայացված է գծապատկեր 2-ում:²¹

Գծապատկեր 2. Համավարակների պահպանման տևողությունը՝ ըստ նյութի

ՆՅՈՒԹ	ՕՐԻՆԱԿ	ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ
Ալյումին	Տարաներ, բազրիքներ	2-8 ժամ
Սովարաթուղթ	Քվեաթուփեր, ընտրախցիկներ	24 ժամ
Կերամիկա	Լոգարանի սալիկներ, զուգարանակոնքեր	5 օր
Պղինձ	Խողովակներ, էլեկտրական սարքավորումներ	4 ժամ
Ապակի	Պատուհաններ, բաժակներ, էկրաններ	≤5 օր
Լատեքս	Բժշկական ձեռնոցներ	≤8 ժամ
Մետաղ	Բռնակներ, դարպասներ	5 օր
Թուղթ	Քվեաթերթիկներ, քվեատուփեր, ձևաթղթեր, նույնականացման քարտեր, պաստառներ	1-5 օր
Պլաստմասսա	Գրիչներ, ստեղնաշարեր, նույնականացման քարտեր,	≤5 օր
Չժանգոտվող պողպատ	Լվացարաններ, ծորակներ	48 ժամ
Փայտ	Սեղաններ, դռներ, բազրիքներ	4 օր

Հիմնված է Kampf G, Todt D, Pfaender S, Steinmann E. տվյալների վրա

Նպատակ և կառուցվածք

Ընտրական գործընթացների և հանրային առողջապահության ոլորտի փորձագետների տեսակետները ներկայացնող սույն փաստաթուղթը նախատեսված է աջակցելու ԸՎՄ-ներին՝ ավելի մանրակրկիտ պլանավորելու և անցկացնելու ընտրություններն առողջապահական ճգնաժամի պայմաններում և, մասնավորապես, COVID-19 համավարակի ընթացքում: Դրա նպատակն է ոչ միայն նվազեցնել ընտրական գործընթացի մասնակիցների առողջությանը, այլ նաև ժողովրդավարությանը սպառնացող պոտենցիալ ռիսկերը՝ չեղարկումների և հետաձգումների պատճառով: Դրանից հնարավոր է խուսափել պատշաճ պլանավորման դեպքում: Այդ նպատակով առաջարկվում է.

- ԸՎՄ-ների համար ստեղծել անհրաժեշտ շրջանակներ՝ ընտրական գործընթացի տարբեր փուլերում գործելու հանրային առողջապահական նկատառումներից ելնելով
- Քննարկել ընտրությունների ժամանակ COVID-19-ի առաջադրած հանրային առողջապահական համակարգի մարտահրավերների շրջանակն ու բնույթը:
- Ներկայացնել առաջարկություններ և ռազմավարություններ՝ ուղղված հանրային առողջապահական ռիսկերի նվազեցմանը առանձին ընտրական փուլերի ժամանակ՝ լեգիտիմ ընտրություններ ապահովելու նպատակով:
- Սահմանել այն հիմնական ռեսուրսները և սարքավորումները, որոնք անհրաժեշտ են ռիսկերի նվազեցման ռազմավարությունների իրականացման համար:
- Ուրվագծել առաջարկվող ռազմավարությունների իրականացման որակի գնահատման և վերահսկման մոտեցումները:

Փաստաթղթի սկզբում ներկայացված են ընդհանուր առաջարկություններ, որոնք կիրառելի են բոլոր ընտրական գործողությունների համար, և կոնկրետ առաջարկություններ՝ ընտրական գործընթացի տարբեր փուլերի համար՝ նախընտրական փուլից մինչև ընտրությունների օր և հետընտրական փուլ: Փաստաթղթի վերջում քննարկվում են այդ առաջարկությունների իրականացման նկատմամբ վերահսկման և գնահատման մոտեցումները:

Նախընտրական գործողություններ

- Ընտրությունների և ռեսուրսների պլանավորում
- Թեկնածուների գրանցում
- Նախընտրական քարոզարշավ
- Ընտրողների իրազեկում
- Ընտրողների գրանցում
- Ընտրատեղամասերի աշխատակիցների հավաքագրում և վերապատրաստում
- Տեղական և միջազգային դիտորդների ու կուսակցությունների լիազոր ներկայացուցիչների հավատարմագրում

Ընտրությունների օրվա գործողություններ և հետընտրական գործընթացներ

- Ընտրատեղամասերի աշխատանք
- Քվեների հաշվարկ և արդյունքների ամփոփում

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր դիտարկումներ COVID-19-ի շրջանում հանրային առողջապահական ոչիսկերի նվազեցման վերաբերյալ

Միջանձնային և անհատների ու վիրուսային կաթիլների ու ֆոմիտների միջև ուղղակի շփումները կարող են տեղի ունենալ ընտրական գործընթացի տարբեր փուլերում՝ հանգեցնելով համավարակի հնարավոր տարածմանը: Լիբերիայում էթոլայի բոնկման վերաբերյալ IFES-ի կատարած վերլուծության արդյունքում առանձնացվել են ընտրական գործընթացի 40 դրվագ՝ կապված մարդկանց կուտակումների և ընդհանուր առարկաների օգտագործման հետ՝ այդպիսով մեծացնելով հիվանդության տարածման ռիսկերը: Այդ ընդհանուր փոխազդեցությունները չեն սահմանափակվում միայն ընտրությունների օրով: Դրանք տեղի են ունենում ընտրական ցիկլի բոլոր փուլերում:

Հաշվի առնելով կորոնավիրուսի փոխանցման յուրահատուկ մեթոդները, հաջորդ բաժիններում քննարկվող բոլոր ցուցումներն ու առաջարկությունների նպատակն է՝

- Կանխել կամ նվազեցնել միջանձնային շփումները
- Կանխել կամ նվազեցնել վարակակիր անձանց կողմից ընդհանուր օգտագործման առարկաների աղտոտումը
- Կանխել կամ նվազեցնել անհատների փոխազդեցությունն աղտոտված առարկաների հետ

Իշխանությունները պետք է ամբողջապես պլանավորեն ընտրական գործընթացը և հաշվի առնեն վերոնշյալ բոլոր երեք խնդիրները, քանզի որքան շատ են նախազգուշական միջոցները, այնքան քիչ են ռիսկերը: Միաժամանակ, ԸՎՄ-ներն ունեն սահմանափակ ժամանակ և ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցների ձեռքբերման և ընտրական գործընթացում նոր ընթացակարգերի ներմուծման համար: Ուստի, ռիսկերի նվազեցմանն ուղղված ջանքերը պետք է կազմեն ռեսուրսներն օպտիմալացնելու համընդգրկուն ռազմավարության մաս՝ հիմնված կոնկրետ միջավայրում COVID-19-ի ռիսկերի գնահատման վրա: Արդյունավետ կիրառման դեպքում այդ միջոցները կարող են զգալիորեն նվազեցնել հիվանդության տարածման ռիսկերը և ողջամիտ կերպով մեղմել ընտրական գործընթացների ժամանակ մարդկանց շրջանում վարակի նկատմամբ առկա վախը: Հակառակ դեպքում, կարող է արձանագրվել մասնակցության ցուցանիշի կտրուկ նվազում և առաջանալ ընտրական արդյունքների լեգիտիմության խնդիր:

“ Ռիսկերի նվազեցմանն ուղղված ջանքերը պետք է կազմեն ռեսուրսներն օպտիմալացնելու համընդգրկուն ռազմավարության մաս՝ հիմնված կոնկրետ միջավայրում COVID-19-ի ռիսկերի գնահատման վրա:

Միջանձնային շփումների կանխում կամ նվազեցում

COVID-19-ի տարածման ռիսկերը նվազեցնելու երաշխիք է սոցիալական հեռավորության պարզ պրակտիկան. գիտակցված վարքագիծ, որը ներառում է **միջանձնային շփումից խուսափում և մարդկանց միջև անհրաժեշտ հեռավորության պահպանում**: Պահանջվող հեռավորությունը կախված է նրանից, թե որքան հեշտ է տարածվում վարակը: Ներկայումս ԱՀԿ-ն²² խորհուրդ է տալիս պահպանել մոտավորապես 3,3 ոտնաչափ (1 մետր) հեռավորություն, իսկ ՀՎԿ-ն²³ 6 ոտնաչափ (մոտավորապես 1,8 մետր): Հնարավորության դեպքում, ԸՎՄ-ները պետք է սահմանեն ավելի մեծ հեռավորության պահպանման պահանջ: Այդուհանդերձ, չնայած 6 ոտնաչափ հեռավորությունը համարվում է համեմատաբար անվտանգ, վերջերս կատարված ուսումնասիրությունները²⁴ ցույց են տվել, որ հազի կամ փոշոտոցի կաթիլները կարող են տարածվել մինչև 27 ոտնաչափ (ութ մետր) հեռավորությամբ ծայրահեղ պայմաններում: Դա ցույց է տալիս, որ բացի սոցիալական հեռավորության նվազագույն պահանջներից, կարևոր է նաև, որ բոլորը պահպանեն **չնչառական հիգիենայի և հազի հիմնական կանոնները**²⁵ (օրինակ, հազալու և փոշտալու ժամանակ օգտագործեն մեկանգամյա օգտագործման անձեռոցիկներ և պատշաճ կերպով դրանցից ազատվեն), միմյանց մոտ գտնվելիս կրեն դիմակներ կամ դեմքի պաշտպանության այլ միջոցներ: Դիմակներին առնչվող կոնկրետ պահանջների վերաբերյալ մանրամասները ներկայացված են «Ընտրությունների և ռեսուրսների պլանավորում» բաժնում:

Սոցիալական հեռավորության վերաբերյալ պայմանը դժվար կլինի իրագործել այն դեպքում, երբ քվեարկողները փակ տարածքներում ունենան օգնության կարիք, ինչպես նաև այն երկրներում, որտեղ մարդիկ ավանդաբար սովոր են սերտ շփմանը և սահմանափակ անձնական տարածք ունենալուն: Այդուհանդերձ, վարակի տարածումը կարող է արդյունավետ կերպով նվազեցվել, եթե մարդիկ լինեն զգոն, տեղադրվեն հեռավորության պահպանման անհրաժեշտության մասին հիշեցնող ցուցապաստառներ, իսկ շենքերն ու դրանց կահավորումը հնարավորություն տան խուսափելու ուղղակի միջանձնային շփումներից: Այս ցուցումները կարող են կիրառվել նաև ընտրատեղամասերի աշխատակիցների վերապատրաստման և ընտրողների իրազեկման քարոզարշավների ժամանակ: Մանրամասները ներկայացված են «Ընտրողների իրազեկում» բաժնում:

Վարակված անձանց կողմից ընդհանուր օգտագործման առարկաների աղտոտման ռիսկերի կանխում կամ նվազեցում

Անձը կարող է վարակվել նաև վիրուս պարունակող մակերևույթներին կամ առարկաներին, այնուհետև սեփական բերանին, քթին և, հնարավոր է նաև, աչքերին դիպչելու ճանապարհով, թեև գիտական շրջանակները դա չեն համարում որպես կորոնավիրուսի փոխանցման առաջնային ճև: Ռիսկերը մեղմելու նպատակով ԸՎՄ-ները կարող են **նվազեցնել օբյեկտներին հպման և դրանց օգտագործման անհրաժեշտությունը**, հնարավորության դեպքում կիրառելով անհպում մեխանիզմներ և ապահովել, որ մարդիկ **օգտագործեն կամ դիպչեն առարկաներին բացառապես ախտահանված ձեռքերով**: ՀՎԿ-ն և ԱՀԿ-ն առաջարկում են ձեռքերի ախտահանման հետևյալ երկու տարբերակները.

- օճառ և ջուր. ձեռքերը լավ լվանալ օճառով և ջրով առնվազն 20 վայրկյան և/կամ
- առնվազն 60 տոկոսանոց ալկոհոլային հիմքով լուծույթ. օգտագործել առնվազն 60 տոկոսանոց ալկոհոլային հիմքով լուծույթ՝ ձեռքերն ու մակերևույթներն ախտահանելու համար:

Թեև, մասնավորապես, Արևմտյան Աֆրիկայի որոշ երկրներում կիրառվել է նաև քլորի լուծույթ (0.05 տոկոս)՝ էթոլա վիրուսի դեմ պայքարի նպատակով, ԱՀԿ-ն խորհուրդ է տալիս այն օգտագործել ձեռքերը լվանալիս՝ «այդ լուծույթն օգտագործողների և այն պատրաստողների համար դրա ունեցած հնարավոր վնասների, ինչպես նաև արևի լույսի կամ ջերմության տակ քլորի քայքայման պատճառով»:

ռով»²⁶: ԱՀԿ-ն հայտնաբերել է նաև շնչառական ախտահանաներ հիվանդների, բուժաշխատողների և այլ մարդկանց շրջանում²⁷ մանգանի կամ քլորի լուծույթների հետ շփման արդյունքում, որոնք օգտագործվել են շրջակա միջավայրի ախտահանման համար՝ քլորի ավելի բարձր տոկոսով, քան ձեռքերի ախտահանման համար պահանջվող 0.05 տոկոսը:

Աղտոտված առարկաների հետ անհատների փոխազդեցության կանխում կամ նվազեցում

Բացի ձեռքերի ախտահանման վերոնշյալ միջոցներից, կարևոր է նաև ապահովել առարկաների ու մակերևույթների ախտահանումը՝ ակտիվ պաթոգենները վերացնելու նպատակով: Այդ նպատակով կարելի է օգտագործել օճառ և ջուր կամ այլ ախտահանիչ միջոցներ (օրինակ, 60 տոկոսանոց ալկոհոլային հիմքով լուծույթ, 0,5 տոկոսանոց ջրածնի պերօքսիդ կամ ցանկացած այլ ախտահանիչ նյութ, որը հաստատվել է որպես արդյունավետ միջոց կորոնավիրուսի դեմ պայքարում)²⁸, կամ պարզապես այդ առարկաներին և մակերևույթներին չպետք է դիպչել այնքան ժամանակ, քանի դեռ վիրուսն ակտիվ է: Առարկաների և մակերևույթների վրա վիրուսի պահպանման տևողությունը կախված է դրանց հիմքում ընկած նյութի տեսակից, ինչպես ցույց է տրված գծապատկեր 2-ում, ինչպես նաև շրջակա միջավայրի ջերմաստիճանից և խոնավությունից²⁹:

Թեև աղտոտված օբյեկտներից և մակերևույթներից պաշտպանությունը մեծացնելու նպատակով օգտագործվում են մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ, կարևոր է նշել, որ վիրուսը կարող է պահպանվել նաև ձեռնոցների վրա, և դրանք կրելիս պետք է խուսափել դեմքին դիպչելուց, հաճախակի փոխել դրանք և անվտանգ դնել նետել: ԸՎՄ-ները պետք է նաև ապահովեն համապատասխան տարբեր չափսերի անձնական պաշտպանիչ միջոցների առկայությունը՝ տղամարդկանց և կանանց համար: Մանրակրկիտ և հաճախակի ձեռքերի ախտահանումն ավելի նախընտրելի տարբերակ է, քան ձեռնոցների օգտագործումը:

Համագործակցություն առողջապահության ոլորտի պետական մարմինների և այլ համապատասխան ինստիտուտների հետ

ԸՎՄ-ներն ընտրություններին ընդառաջ հաճախ ձևավորում են Համատեղ ընտրական գործընթացների կենտրոններ՝ դյուրինացնելու այլ պետական և տարածքային իշխանությունների հետ համագործակցությունը: Ավանդաբար, այդ կենտրոնները մեծամասամբ ընդգրկում են անվտանգության և իրավապահ տարատեսակ կազմակերպությունների ներկայացուցիչների՝ խաղաղ ընտրությունների ընթացքն ապահովելու նպատակով, սակայն որոշ կենտրոններում ներկայացված է պետական ինստիտուտների ավելի լայն շրջանակ: Հանրային առողջապահական ճգնաժամերի պայմաններում, ինչպիսին է COVID-19-ի համավարակը, առողջապահական համակարգի պետական մարմինները պետք է ստանձնեն կարևոր դերակատարություն այդ համագործակցության կենտրոններում:

Թեև ընտրությունների հետ կապված աշխատանքների համակարգումը, որպես կանոն, իրականացնում են ԸՎՄ-ները, հաշվի առնելով COVID-19-ի ազդեցությունն առօրյա կյանքի բոլոր ասպեկտների վրա, մի շարք երկրներ ձևավորել են հատուկ աշխատանքային խմբեր, որոնցում ներկայացված են երկրի բարձրագույն գործադիր իշխանությունները: Վարչապետի կամ փոխնախագահի աշխատակազմի ներգրավումն աշխատանքային խմբերում ունի մի շարք առավելություններ, ինչպես, օրինակ, բյուրոկրատիայի շերտերի վերացումը և անհրաժեշտ ֆինանսական միջոցների ժամանակին ապահովումը: Միաժամանակ, քանի որ այդ աշխատանքային խմբերը իրենց բնույթով կարող են խիստ տեխնիկականից վերաճվել քաղաքականի, ԸՎՄ-ները պետք է հավատարիմ մնան իրենց իրավական մանդատին՝ ժողովրդավարական ընտրություններ կազմակերպելու և անցկացնելու համար:

Այլ պետական ինստիտուտների հետ համակարգային աշխատանքն առավելագույնս արդյունավետ և փոխշահավետ դարձնելու համար ԸՎՄ-ները պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեն երեք առանցքային խնդիրների վրա՝ անկախ ընտրությունների անցկացման հանգամանքից: Ստորև ներկայացված երեք միջոցառումներն ունեն առանցքային նշանակություն հանրային առողջապահական ճգնաժամի պայմաններում ընտրական գործընթացի կազմակերպման համար.

- **Առողջապահական համակարգի տեղի իրավասու մարմինների և փորձագետների հետ իրականացնել հանրային առողջապահական ռիսկերի համատեղ գնահատում**, որը կներառի բոլոր ընտրական գործընթացները և դրանց շրջանակում վարակի տարածման ռիսկերը: Դա պետք է իրականացվի ռիսկերի գնահատման այն գործընթացին զուգահեռ, որոնք արդեն նախաձեռնել են որոշ ԸՎՄ-ներ՝ ամբողջական և թափանցիկ ընտրությունների ապահովման նպատակով (օրինակ, ընտրակեղծիքների, համակարգային մանիպուլյացիաների և չարաշահումների կանխում):
- Բոլոր շահագրգիռ կողմերի (օրինակ, կուսակցություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՔՀԿ), դիտորդական խմբեր) հետ խորհրդատվությունների և գնահատման արդյունքների հիման վրա **մշակել ռիսկերի նվազեցման պլան**, որում մանրամասն կներկայացվեն կանոնակարգերում և ընթացակարգերում անհրաժեշտ փոփոխությունները և այն լրացուցիչ նյութերը, որոնք անհրաժեշտ կլինեն ընտրության կազմակերպիչներին և այլ շահագրգիռ կողմերին՝ իրենց վերապահված գործառույթներն իրականացնելու համար: Որոշ դեպքերում կարող է դիտարկվել նաև օրենսդրական փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը³⁰: ԸՎՄ-ներից կարող է պահանջվել նաև իրազեկման պլանի մշակում՝ հանրությանը ռիսկերի նվազեցման միջոցառումների մասին իրազեկելու համար:
- **Ռիսկերի նվազեցման պլանն ինտեգրել ԸՎՄ-ների վերանայած գործառնական պլանում**: Դա, ամենայն հավանականությամբ, կպահանջի ընտրությունների օրացույցի և բյուջեի վերանայում:

I փուլ. նախընտրական գործողություններ

Ընտրությունների և ռեսուրսների պլանավորում

Դիտարկումներ հետաձգումների և ընտրական օրացույցում ու իրավական դրույթներում անհրաժեշտ այլ փոփոխությունների վերաբերյալ

Աշխարհում COVID-19-ի տարածմանը զուգահեռ գրեթե 60 երկրներ և տարածքներ հայտարարեցին համապետական կամ տարածքային ընտրությունների հետաձգման մասին՝ այն մտավախությամբ, որ լայնամասշտաբ ընտրական գործընթացները կարող են արագացնել վարակի տարածման տեմպերը, և որ ԸՎՄ-ները ի վիճակի չեն լինի բավարար չափով մեղմել այդ ռիսկերը: Թեև որոշ դեպքերում այդ հետաձգումները կարող են լինել լավագույն լուծումը՝ ընտրության մասնակիցներին ու կազմակերպիչներին պաշտպանելու համար, դրանք կարող են ծառայել նաև որպես քաղաքական մանիպուլյացիաների և իշխանության չարաշահումների հնարավորություն³¹: Պետության ղեկավարները կարող են օգտագործել հանրային առողջապահական ճգնաժամը որպես պատրվակ ընտրական գործընթացները կասեցնելու համար և ընդլայնել իրենց իշխանությունը՝ խարխիլելով ժողովրդավարական սկզբունքները ստեղծված ծանր պայմաններում: Եթե հետաձգումը քաղաքացիներին պաշտպանելու միակ հնարավոր լուծումն է, ապա ԸՎՄ-ները և հանրային իշխանությունները պետք է ենթարկվեն ընտրությունների հետաձգմանը վերաբերող իրավական դրույթներին, առողջապահության ոլորտի մարմինների և ընտրական գործընթացում ներգրավված անձանց

հետ համատեղ մշակեն ռիսկերի գնահատման և դրանց նվազեցմանն ուղղված պլաններ՝ ավելի ուշ փուլում ընտրություններն անցկացնելու վերաբերյալ, հնարավորության դեպքում՝ սահմանեն ընտրությունների անցկացման նոր ժամկետներ, հանրությանը ներկայացնեն հիմնավորումներ իրենց որոշումների վերաբերյալ և իրազեկեն այն գործողությունների մասին, որոնք նախաձեռնելու են հանրային առողջապահական ռիսկերը նվազեցնելու նպատակով ընտրական գործընթացում ներառված բոլոր կողմերի համար:

Դիտարկումներ ընտրությունների ժամկետների վերաբերյալ

Ընտրությունների անցկացման օրը կամ ժամանակային միջակայքը սահմանելիս՝ պետք է հաշվի առնվեն բազմաթիվ գործոններ, ներառյալ՝ եղանակային պայմանները: Ընտրությունները կարող են նշանակվել, օրինակ, ավելի մեղմ ջերմաստիճանով կամ ավելի քիչ տեղումներով ուղեկցվող եղանակներին, որպեսզի ընտրողները հնարավորություն ունենան հավաքվել բաց երկնքի տակ և խուսափեն փակ տարածքներում կուտակումներից: Այն դեպքում, երբ հիվանդությունները փոխանցվում են այնպիսի վեկտորներով, ինչպիսիք են մոծակները կամ այլ միջատները, ապա իշխանությունները պետք է հաշվի առնեն նաև այդ վեկտորների առավել ակտիվ շրջանը: Օրինակ, հարբուխի վարակն ավելի բարձր ջերմաստիճանի դեպքում նահանջում է: 2003թ. սուր շնչառական համախտանիշի (SARS) տարածումը ևս նվազեց բարձր ջերմաստիճանի պայմաններում: Թեև Միացյալ Նահանգներում և Եվրոպայում որոշ փորձագետներ ակնկալում են COVID-19-ի տեմպերի որոշակի նվազում ավելի տաք, խոնավ եղանակային պայմաններում³², դեռևս հստակ չէ, թե որքան զգալի կլինի նվազման աստիճանը: Բացի այդ, հիվանդության տարածումը Հարավային կիսագնդում ցույց է տալիս, որ բարձր ջերմաստիճանը դեռևս բավարար չէ կորոնավիրուսի տարածումը զսպելու համար:

Ընտրությունների և ընտրական գործընթացների ժամկետների վերաբերյալ որոշում կայացնելիս՝ պետք է հաշվի առնել նաև հիվանդության տարածման տեմպերը: COVID-19 համավարակի դեպքում ԱՀԿ-ն առանձնացրել է տարածման սցենարների 4 կատեգորիա³³. 1) ոչ մի դեպք, 2) եզակի դեպքեր, 3) դեպքերի կլաստերներ, 4) ներհամայնքային տարածում: Վերջինս առավել բարդ կատեգորիա է, քանզի այն ենթադրում է բազմաթիվ չփոխկապակցված կլաստերների հայտնաբերում երկրի տարբեր հատվածներում: Վատագույն սցենարների դեպքում կառավարության նախաձեռնած միջոցառումները, ինչպիսիք են, օրինակ, պարտադիր մեկուսացումը և ճանապարհորդական խիստ սահմանափակումները, կարող են առկա կարգով ընտրությունները դարձնել ոչ կենսունակ:

ԸՎՄ-ները պետք է հաշվի առնեն նաև իրենց երկրում կամ տարածքում հիվանդության բռնկման փուլը: Հիմնվելով գրանցված դեպքերի աճի հետագծի վերաբերյալ ստացված տվյալների արժանահավության վրա՝ իշխանությունները կարող են պատկերացում կազմել, թե արդյոք հիվանդությունն ունի աճի միտում, կայուն է, թե նվազում է: Թեև այդ փոփոխականն ինքնին չի կարող երաշխավորել ընտրությունների անվտանգությունը, քանզի կարող են առաջանալ հիվանդության նոր օջախներ, սակայն կայուն և նվազող թվերն ապահովում են ընտրությունների անցկացման առավել լավատեսական սցենարներ:

Վերջապես, պետք է հաշվի առնել նաև ընտրությունների անցկացման պահին երկրի առողջապահական համակարգի կառուցվածքն ու ներուժը և հիվանդանոցների ծանրաբեռնվածության ակնկալվող աստիճանը: Եթե հիվանդանոցների մահճակալների և թոքերի արհեստական օդափոխման սարքերի թվի պահանջարկը հասնի հնարավոր առավելագույնին, ապա ընտրությունների անցկացումը կարող է գերծանրաբեռնել առողջապահական համակարգը և այն մոտեցնել կործանման՝ չհաշված նաև ընտրատարածքներ անհատական պաշտպանիչ միջոցների մատակարարումները:

Դիտարկումներ լրացուցիչ նյութերի, սարքավորումների և պարագաների սահմանման ու ձեռքբերման վերաբերյալ

ԸՎՄ-ները պետք է կատարեն մի շարք փոփոխություններ ձեռք բերված նյութերի և/կամ սարքավորումների ուղղությամբ այն դեպքում, եթե որոշվի ընտրություններն անցկացնել հեռավար կարգով: Օրինակ, եթե երկրի օրենսդրական շրջանակները թույլ են տալիս, փոստային կամ հեռակա կարգով քվեարկության համակարգի ներդնումը կամ ընդլայնումը կարող են պահանջել ավելի մեծ քանակությամբ ծրարներ և սարքավորումներ, ավելի խոշոր փոստային վճարումներ և շենքեր՝ քվեաթերթիկների մշակման և լրացուցիչ անձնակազմի հավաքագրման ու վերապատրաստման համար: Ընտրական ընթացակարգերն առցանց հարթակ տեղափոխելու դեպքում անհրաժեշտ կլինեն հավելյալ ֆինանսական միջոցներ՝ անվտանգ վիրտուալ հարթակների ստեղծման և պահպանման համար:

Առկա կարգով ընտրությունների անցկացման դեպքում ևս ԸՎՄ-ները պետք է ձեռք բերեն մի շարք պարագաներ՝ ընտրողների և թեկնածուների գրանցման ու քվեարկության ընթացքում հիվանդության տարածման ռիսկերը նվազեցնելու համար: Պետք է սահմանվեն համապատասխան ռեսուրսները, մատակարար ընկերությունները, իսկ գնումները կատարվեն հնարավորինս արագ և թափանցիկ, որպեսզի ամեն ինչ պատրաստ լինի ժամանակին և բավարար քանակությամբ:

Հատկապես այնպիսի հիվանդությունների լայնամասշտաբ տարածման դեպքում, ինչպիսին է COVID-19-ի համավարակը, կարող են առաջանալ որոշ ապրանքների մատակարարման ընդհատումներ՝ արտադրող ընկերությունների ժամանակավոր փակման և որոշ ապրանքների նկատմամբ խոշոր գլոբալ պահանջարկի պատճառով: Ուստի, առաջարկվում է, որ նախքան ընտրությունների անցկացման վերաբերյալ որոշում կայացնելը ընտրությունների կազմակերպիչները համոզվեն, որ բոլոր անհրաժեշտ պարագաներն առկա են և ժամանակին կարող են առաքվել: Ցանկալի է, որ անհրաժեշտ իրերի մատակարարումը հենվի երկրում նախապես մշակված քվեարկության պարագաների մատակարարման ցանցի վրա:

Ինչպես արդեն նշվել է, COVID-19-ի փոխանցման ռիսկերը նվազեցնելու համար ընտրատեղամասերը, ամենայն հավանականությամբ, կունենան հետևյալ պարագաների անհրաժեշտությունը.

- **Օճառ կամ ակոհոլային հիմքով լուծույթ՝** ձեռքերը լվանալու և ախտահանելու համար, և մակերևույթներն ախտահանելու համար **հաստատված այլ ախտահանիչ միջոցներ:** Յուրաքանչյուր նյութի քանակը կախված է ընտրողների և ընտրատեղամասերի քանակից և բոլոր այն անհատական միջոցառումներից (օրինակ, ընտրողների գրանցում, ընտրատեղամասերի աշխատակիցների վերապատրաստում), որոնք ԸՎՄ-ն նախատեսում է անցկացնել: Թեև ընտրության օրը մասնակցության ցուցանիշը հազիվ թե հասնի 100 տոկոսի, ԸՎՄ-ները պետք է նախատեսեն քվեարկողների հնարավոր առավելագույն քանակ:
- **Դիմակներ:** Եթե դիմակները ճիշտ պատրաստվեն և օգտագործվեն, ապա կնվազեցնեն օդակաթիլային մասնիկների ներթափանցումը և կմեծացնեն դիմակը կրողի շրջապատի պաշտպանությունը: N95 ռեսպիրատորները կարող են լինել լավ տարբերակ ապրանքների անսահմանափակ մատակարարումների պայմաններում՝ հաշվի առնելով դրանց բարձր արդյունավետությունը³⁴: Բժշկական դիմակները նույնպես օգտակար են, թեև դրանք ապահովում են ավելի քիչ պաշտպանություն, քան N95 ռեսպիրատորները: Հաշվի առնելով այդ պարագաների գլոբալ սղությունը՝ բուժաշխատողներին պետք է տրվի բացարձակ առաջնահերթություն ինչպես N95 ռեսպիրատորների, այնպես էլ բժշկական դիմակների ձեռքբերման հարցում: Ապրանքների սղության պահպանման դեպքում ԸՎՄ-ները պետք է դիտարկեն այլընտրանքային տարբերակներ, օրինակ, ընտրատեղամասերի աշխատակիցներին, այլ աշխատողներին և ընտրողներին ապահովեն կտորից դիմակներով: Վերջիններիս օգտագործման դեպքում պետք է ներկայացվեն ու պահպանվեն դրանց պատշաճ լվացման վերաբերյալ կանոնները: Եթե ԸՎՄ-ներն ի վիճակի չլինեն ընտրության մասնակիցներին ապահովել դիմակներով, ապա պետք է նրանց կոչ անեն գնել կամ պատրաստել ինքնաշեն

դիմակներ: ՀՎԿԿ-ն տրամադրել է ցուցումներ, թե ինչպես պատրաստել դիմակներ տնային պայմաններում³⁵:

Խորհուրդ է տրվում նաև **դեմքի թափանցիկ պաշտպանիչ վահանների** կիրառում COVID-19 թեստի դրական արդյունքով ընտրողների հետ ուղիղ շփման մեջ գտնվող ընտրատեղամասերի աշխատակիցների և այն աշխատողների համար, ովքեր աջակցելու են ընտրողներին և, հետևաբար, չեն կարողանալու պահպանել պահանջված սոցիալական հեռավորությունը: Թափանցիկ դիմակները կարող են օգնել նաև այն ընտրողներին, ովքեր ունեն խլություն կամ լսողական խնդիրներ՝ ընտրատեղամասերի աշխատակիցների շրթունքներով կարդալու համար:

- **Պարանները, թելերը, թոկերը, կաչույն ժապավենները, կաչույն թղթերը և այլ ժապավենային միջոցները** կարող են ապահովել սոցիալական հեռավորության պահանջը հերթերի և յուրաքանչյուր ընտրական ընթացակարգի ժամանակ: Խորհուրդ է տրվում յուրաքանչյուր ընտրատեղամասում վերոնշյալ միջոցներից մեկի կամ մի քանիսի կիրառում՝ ընտրողների կանոնավոր հերթերը պահպանելու նպատակով: Դրանք կարելի է ձեռք բերել տեղական արտադրող ընկերություններից՝ ցածր գներով, իսկ համապատասխան քանակը կարելի է որոշել նախկինում ընտրական գործընթացի ժամանակ ունեցած նմանատիպ փորձի դիտարկման արդյունքում: Ժապավենները կամ թելերը կարելի է կապել պարանով կամ թոկով՝ 6 ոտնաչափ հեռավորությամբ՝ հերթում կանգնածների միջև անհրաժեշտ սոցիալական հեռավորությունն ապահովելու համար, իսկ կաչույն ժապավենները և կաչույն թղթերը կարող են փակցվել հատակին՝ ընտրողներին ուղղորդելով համապատասխան գործընթացի ժամանակ կանգնել համապատասխան կետում: Այդուհանդերձ, հերթը կարգավորող աշխատակիցները ևս պետք է վերահսկեն անհրաժեշտ սոցիալական հեռավորության պահպանման ընթացքը:
- **Օրգանական ապակիները կամ այլ թափանցիկ վահանները** նույնպես կարող են ստեղծել պաշտպանիչ պատնեշ ընտրատեղամասերի աշխատակիցների, այլ աշխատողների և ընտրողների միջև տարբեր ընթացակարգերի ժամանակ (օրինակ, ընտրողների գրանցում, ինքնության ստուգում, ընտրացուցակների ստորագրում) և օգնել խուսափել օդակաթիլային ճանապարհով վարակի տարածումից: Այդ պաշտպանիչ վահանները պետք է հաճախակի ախտահանվեն համապատասխան միջոցներով, և պետք է փուսափել դրանց դիպչելուց:
- **Ձեռնոցները** կարելի է համարել որպես ֆոմիտների և ընտրողների հետ ուղղակի շփումից խուսափելու միջոց ընտրատեղամասի աշխատակիցների և այլ աշխատողների համար, քանի դեռ դրանք կրող անձինք չեն դիպչել իրենց դեմքին: Ձեռնոցները պետք է հաճախակի փոխել: Եթե մատակարարումներն ու ռեսուրսները թույլ են տալիս, ապա առաջարկվում է յուրաքանչյուր ընտրատեղամասի տրամադրել մեկ տուփ ձեռնոց (յուրաքանչյուր տուփում՝ սովորաբար 50 զույգ) ընտրատեղամասի աշխատակիցների համար, ինչը վերջիններիս հնարավորություն կտա դրանք հաճախակի փոխել: Օգտագործված ձեռնոցները պետք է պատշաճ կերպով հանել և անվտանգ դնել նետել: Քանզի բոլոր ընտրական ընթացակարգերի ժամանակ ընտրողների անհատական փոխազդեցությունը համեմատաբար փոքր է, արդյունավետության մեծացման տեսանկյունից խորհուրդ է տրվում ոչ թե կրել ձեռնոցներ, այլ ձեռքերն ախտահանել ընտրական գործողությունից առաջ և հետո³⁶: Ձեռնոցները կարող են նաև ներշնչել կեղծ անվտանգության զգացում³⁷, պատճառ դառնալ, որ մարդն ավելի շատ դիպչի մակերևույթներին կամ իր դեմքին, ձեռքերի ախտահանումը դարձնել ավելի բարդ ու ոչ հաճախակի և ավելի մեծ վտանգներ առաջացնել, եթե մարդիկ դրանք չօգտագործեն ինչպես հարկն է, ինչն առավել հավանական սցենար է միլիոնավոր մարդկանց շրջանում դրանց օգտագործման պայմաններում:
- Ընտրողների և ընտրական գործընթացի այլ մասնակիցների համար հիգիենայի վերաբերյալ ցուցումներ պարունակող **ուսումնական նյութերը** խորհուրդ է տրվում ներկայացնել բոլոր հանրային միջոցառումների ժամանակ: Պաստառները պետք է տեղադրվեն ընտրատեղամասերի ներսում և

դրսում՝ երկրի պաշտոնական լեզվով և հստակ պատկերներով: Ընտրության կազմակերպիչները պետք է համագործակցեն առողջապահական համակարգի մարմինների հետ՝ որոշելու համար, թե որ պաստառներն են առավել նպատակահարմար, այնուհետև կապ հաստատեն դրանք արտադրող ընկերությունների հետ: Հնարավոր է, որ պետական և միջազգային ընկերություններն այդ նյութերի մեծ մասը տրամադրեն անվճար:

- Ընտրություններին առնչվող **ռադիո և հեռուստատեսային ուղերձներն ու այլ հանրային հաղորդագրությունները** պետք է պարունակեն պարզ, սակայն նպատակաուղղված առողջապահական ցուցումներ ընտրությունների մասնակիցների համար՝ նախքան ընտրատարածք ժամանելը: Առավել մանրամասն ներկայացված է «Ընտրողների իրազեկում» բաժնում: Այդ հաղորդագրությունները պետք է մշակվեն առողջապահական համակարգի մարմինների հետ՝ ապահովելու դրանց համապատասխանությունը հանրային ծառայության այլ հաղորդագրությունների հետ: Եթե այդ հաղորդագրությունները կցվեն ընտրությունների համար նախապես պլանավորված հաղորդագրություններին և լրատվամիջոցներին, ապա հնարավոր կլինի կրճատել ծախսերը: Հաղորդագրությունները պետք է ներկայացված լինեն մատչելի ձևաչափով՝ պետական լեզվով, մեծ տառաչափով, ժեստերի լեզվով: Տեղեկատվության տարածման ռազմավարություններում պետք է օգտագործվեն այն խողովակները, որոնց միջոցով հնարավոր է իրազեկել կանանց, երիտասարդներին, սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց և ավանդաբար խոցելի խմբերին:

Չնայած որոշ երկրներ կիրառում են անհպում ջերմաչափեր COVID-19 համավարակի շրջանում, որոնք արդյունավետ եղան Արևմտյան Աֆրիկայում Էբոլայի բռնկման ժամանակ, այդուհանդերձ առաջին դեպքում դրանց կիրառումն այնքան էլ արդյունավետ չէ: Զերմաչափը կարող է ցույց տալ կեղծ դրական կամ կեղծ բացասական արդյունք³⁸, հատկապես այն դեպքում, երբ մարդն ընդունում է ջերմությունը կարգավորող դեղամիջոցներ: Բացի այդ, դրանք չեն կարող հայտնաբերել վարակի նշաններ այն դեպքում, երբ հիվանդությունն ուղեկցվում է առանց ախտանշանների: Եթե Էբոլայի դեպքում ջերմությունը հիվանդության առաջին ախտանշաններից է, և մարդը չի հանդիսանում վարակակիր այնքան ժամանակ, քանի դեռ չկան ախտանշաններ, ապա վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ COVID-19-ով վարակված անձինք կարող են որևէ ախտանշան չունենալ, սակայն համարվել վարակակիր³⁹: Հատկապես ռեսուրսների սղության դեպքում *ջերմաչափը* չպետք է համարվի առաջնահերթություն:

Դիտարկումներ բյուջեի և լրացուցիչ ծախսերի վերաբերյալ

ԸՎՄ-ները պետք է նկատի ունենան, որ բոլոր վերոնշյալ ռեսուրսները կարող են պահանջել լրացուցիչ ծախսեր: Կախված հիվանդության տարածման աստիճանից՝ հնարավոր է, որ երկրում կամ տարածաշրջանում գործող այլ կազմակերպություններ ունենան միևնույն ռեսուրսների կարիքը, ինչը կարող է հանգեցնել սղության և գների աճի: Նոր պարագաների ձեռքբերումը հանրային առողջապահական ճգնաժամի առաջադրած միակ լրացուցիչ ծախսը չէ, որը կարող է առաջ գալ ընտրությունների ընթացքում: Եթե հիվանդության բռնկման շրջանում ընտրական գործընթացները որոշվի անցկացնել առկա կարգով, ապա ԸՎՄ-ները պետք է դիտարկեն այն եղանակները, որոնց միջոցով հնարավոր է նվազեցնել մարդկային կուտակումները և ապահովել մասնակիցների միջև անհրաժեշտ սոցիալական հեռավորություն: Այդ լուծումները կարող են ներառել գրանցում կատարող կենտրոնների աշխատանքի ավելի տևական ժամանակահատված, ընտրատեղամասերի աշխատակիցների համար ավելի մեծ թվով վերապատրաստման դասընթացների կազմակերպումը և անցկացումը՝ ավելի փոքր խմբեր ձևավորելու համար, և ավելի մեծ տարածքների վարձակալությունը՝ սահմանված սոցիալական հեռավորության պահպանման նկատառումով: Բացի այդ, հաշվի առնելով անձնական պաշտպանիչ միջոցների պատշաճ կիրառման վերաբերյալ փոփոխված ընթացակարգերը և վերապատրաստումների համար սահմանված նոր պահանջները, վերապատրաստման ծրագրերը կարող են պահանջել լրացուցիչ ժամանակ: Արդյունքում, կավելանան նաև ծախսերը:



ԸՎՄ-ները պետք է հաշվի առնեն բոլոր լրացուցիչ ծախսերը և այն, թե արդյոք կարող են դրանք հոգալ, համագործակցեն այլ գործընկերների և ընկերությունների հետ՝ բյուջեի սահմաններից դուրս ծախսերը հոգալու համար, և իրենց գործունեությունը համակարգեն առողջապահության ոլորտի պետական մարմինների հետ՝ սահմանելու առաջնահերթ միջոցառումների հետ կապված անհետաձգելի ծախսերը:

Եթե որոշվի ընտրական գործընթացներն անցկացնել հեռավար կարգով, ապա ևս կպահանջվեն լրացուցիչ ծախսեր: Օրինակ, ԸՎՄ-ները ստիպված կլինեն ներդրումներ կատարել առցանց հարթակներում, վիրտուալ վերապատրաստման դասընթացներում, ուղարկվող ձևաթղթերում և նյութերում, ինչպես նաև անվտանգության միջոցառումներում՝ ապահովելու այդ ռեսուրսների լեգիտիմ օգտագործումը: -ները պետք է դիտարկեն բոլոր լրացուցիչ ծախսերը և այն, թե արդյոք կարող են դրանք հոգալ, համագործակցեն այլ գործընկերների և ընկերությունների հետ՝ բյուջեի սահմաններից դուրս ծախսերը հոգալու համար, և իրենց գործունեությունը համակարգեն առողջապահության ոլորտի պետական մարմինների հետ՝ սահմանելու առաջնահերթ միջոցառումների հետ կապված անհետաձգելի ծախսերը:

Թեկնածուների գրանցում

Դիտարկումներ փոստային կապի միջոցով թեկնածուների գրանցման վերաբերյալ

Թեկնածուների գրանցման գործընթացը կուսակցություններին և անկախ թեկնածուներին թույլ է տալիս պաշտոնապես ձևակերպել իրենց մասնակցությունն ընտրություններին: ԸՎՄ-ները պետք է մշակեն տպագիր կամ էլեկտրոնային քվեաթերթիկներ ընտրությունների օրվա համար՝ օգտագործելով գրանցման ժամանակ կուսակցությունների կամ թեկնածուների վերաբերյալ լրացված տեղեկատվությունը: Քանզի գրանցման ժամանակ ստացված տեղեկատվությունն օգտագործվելու է քվեաթերթիկների համար, չափազանց կարևոր է, որ այն լինի ճշգրիտ, քանի որ սխալները կարող են ազդել ընտրվելու իրավունքի և քվեաթերթիկների տպագրության վրա:

Երկրի ընտրական համակարգից և թեկնածուների գրանցումը կարգավորող իրավական շրջանակներից կախված՝ գործընթացը կարող է մեծամասամբ իրականացվել կամ անձնապես, կամ փոստային ճանապարհով: Վերջին տարբերակը պարունակում է ավելի քիչ ռիսկեր թեկնածուների առողջության համար, և այդ ռիսկերը հարաբերականորեն ավելի հեշտ է կառավարել և թեկնածուների, և դիմումներն ընդունող աշխատակիցների համար: Ինչպես ավելի մանրամասն ներկայացված է «Ընտրատեղամասերի աշխատանք» բաժնում, տանը ձևաթուղթ լրացնող անձինք պետք է ախտահանեն իրենց ձեռքերը գործընթացի ավարտից հետո, իսկ ծրարը, որով ուղարկվում է ձևաթուղթը, պետք է լինի ինքնասուսնծվող: Եթե ծրարն այդպիսին չէ, ապա դրա վրա պետք է փակցված լինեն ցուցումներ՝ ծրարը թքով չկայցնելու մասին, և առաջարկվեն այլընտրանքային անվտանգ միջոցներ, օրինակ՝ սոսինձի ակտիվացման համար խոնավ սպունգի գործածում: Փոստային դիմումներով զբաղվող անձինք պետք է օգտագործեն ձեռնոցներ, հետևեն ձեռքերի ախտահանման ցուցումներին, խուսափեն իրենց դեմքին դիպչելուց և հաստատության ներսում պահպանեն սոցիալական հեռավորություն:

Դիտարկումներ թեկնածուների առկա կարգով գրանցման ընթացակարգերի վերաբերյալ

Թեկնածուների գրանցման գործընթացների մեծ մասը ինչ-որ պահի կարող է պահանջել թեկնածուների ֆիզիկական ներկայություն հատուկ գրասենյակում՝ պաշտոնական փաստաթղթերի օրիգինալ տարբերակները ներկայացնելու, ձևաթղթերը ստորագրելու կամ քվեաթերթիկի համար լուսանկարվելու նպատակով⁴⁰: Որոշ դեպքերում պահանջվում է նաև կուսակցությունների լիազոր ներկայացուցիչների կամ ականատեսների ներկայությունը՝ մեծացնելով հաստատության ներսում հավաքված մարդկանց քանակը: Ուստի, առկա կարգով թեկնածուների գրանցման համար տարածքի ընտրության ժամանակ ԸՎՄ-ների ներկայացուցիչները պետք է ապահովեն դրսում կամ ներսում հերթ կանգնած անձանց սոցիալական հեռավորությունը, մուտքի և ելքի համար համապատասխան ցուցումների պահպանումը և ծառայողների համար հատկացնեն բավարար տարածք՝ անվտանգ պայմաններում աշխատելու համար: Հատուկ հաստատություն մուտք գործելուց առաջ դիմորդները պետք է պարտադիր ախտահանեն իրենց ձեռքերը: Պետք է նաև տեղադրվեն պատահաններ՝ ախտահանման կարգի վերաբերյալ ցուցումներով:

ԸՎՄ-ները սկսել են թեկնածուների գրանցման համակարգերն ինտեգրել քվեաթերթիկների ձևավորման էլեկտրոնային համակարգում և թեկնածուներից պահանջում են լրացնել անձնական տեղեկատվություն, որը մուտքագրվում է համակարգ գրանցման պահին: Գրասենյակներում տեխնիկական սարքերի օգտագործման, փաստաթղթերի փոխանակման, ձևաթղթերի լրացման և լուսանկարահանման ժամանակ COVID-19-ի տարածման ռիսկերը նվազեցնելու նպատակով՝ թեկնածուների գրանցման էլեկտրոնային համակարգի օգտագործումը կարող է ներառել այնպիսի միջոցներ, որոնք ներկայացված են «Ընտրողների գրանցում» բաժնում: Թեկնածուների գրանցման ընթացակարգի վերաբերյալ ուղեցույց մշակելիս՝ ԸՎՄ-ները պետք է դրանցում ներառեն սոցիալական հեռավորության պահպանման, ձեռքերի ախտահանման և շնչառական հիգիենայի վերաբերյալ ցուցումներ: Խորհուրդ է տրվում, որ ինչպես թեկնածուները, այնպես էլ ընտրական գործընթացի կազմակերպիչները կրեն դիմակներ և, հնարավոր է նաև, ձեռնոցներ՝ հաշվի առնելով փաստաթղթերի պարբերական փոխանակումը և թեկնածուների լուսանկարահանման ժամանակ անձանց միջև պահպանվող փոքր սոցիալական հեռավորությունը:

Դիտարկումներ թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ ստորագրությունների վերաբերյալ

Ըստ ընդհանուր պրակտիկայի, թեկնածուներից պահանջվում է ներկայացնել ընտրական իրավունք ունեցող անձանց նվազագույն թվով ստորագրություններ: Հազարավոր ստորագրություններ անձամբ հավաքելն ու բուկլետներն առձեռն բաժանելը առաջ են բերում կորոնավիրուսի տարածման հետ կապված տարատեսակ ռիսկեր, քանզի ստորագրություն հավաքողները և ստորագրողները շփվում են միմյանց հետ և դիպչում են միևնույն առարկաներին: Հնարավորության դեպքում ԸՎՄ-ները պետք է դիտարկեն պահանջվող ստորագրությունների քանակի կրճատման և ստորագրություններն առցանց հավաքելու հնարավորությունը՝ օգտագործելով անվտանգ հարթակներ:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆ

Դիտարկումներ ավանդական և նոր մեդիա քարոզչությունների վերաբերյալ

Նախընտրական քարոզչության համար հավասար հնարավորությունների ապահովումը կարևոր գործոն է արդար ընտրությունների անցկացման համար: Թեև ճանաչված պաշտոնատար անձինք նախկինի պես կունենան լրատվամիջոցներին հասանելիություն և, ամենայն հավանականությամբ, կմեծացնեն իրենց ազդեցությունը հանրային առողջապահական ճգնաժամի ընթացքում, ընդդիմության, նոր թեկնածուների և ավելի քիչ ռեսուրսների տիրապետող թեկնածուների համար կարող է ավելի բարդ լինել ձեռք բերել ճանաչելիություն՝ սահմանափակ հանրային միջոցառումների կամ լիակատար մեկուսացման պայմաններում: Բազմաթիվ երկրներում պաշտոնների մեծ մասը զբաղեցնում են տղամարդիկ, և քարոզչության խոչընդոտները կարող են նվազեցնել կին թեկնածուների՝ ճանաչելի դառնալու և ընտրվելու հնարավորությունը:

Այդ համատեքստում առավել կարևոր է, որ բոլոր թեկնածուները և կուսակցություններն ունենան հավասար հասանելիություն լրատվամիջոցներին և կիրառվեն քաղաքական ֆինանսավորման կարգավորումները: ԸՎՄ-ները կարող են դիտարկել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր լրատվամիջոցների հետ համագործակցությունը՝ կուսակցությունների և թեկնածուների համար ապահովելով լրատվամիջոցների հասանելիությունը, և խրախուսեն ավելի շատ հեռուստաբանավեճերի անցկացումը՝ նոր թեկնածուներին հնարավորություն տալով ներկայացնել իրենց քաղաքական հայացքները: ԸՎՄ-ները կարող են դիտարկել նաև այլ միջոցներ՝ ավելի քիչ ռեսուրսների տիրապետող թեկնածուների մասնակցությունը խթանելու համար, ինչպես, օրինակ, գրանցման վճարների չեղարկումը:

Հնարավորության դեպքում ԸՎՄ-ները կարող են խրախուսել կուսակցություններին՝ համագործակցելու առողջապահության ոլորտի պետական մարմինների հետ իրենց գործունեության համար անհրաժեշտ ռիսկերի նվազեցման հատուկ ընթացակարգերի վերաբերյալ հարցերի շուրջ, և ապահովեն անխափան տեղեկատվություն հիվանդության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ: Բանավեճերի, մամուլի ճեպագրույցների և ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ առցանց հեռարձակվող միջոցառումների ժամանակ պետք է պահպանվեն ռիսկերի նվազեցմանն ուղղված հատուկ նախազգուշական միջոցները: Մասնակիցները պետք է պահպանեն միմյանցից առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն, օգտագործեն անձնական պաշտպանիչ միջոցներ (մասնավորապես՝ դիմակներ) և հետևեն ձեռքերի ախտահանման վերը նշված ցուցումներին: Ենթագրերը և ժեստերի լեզվի թարգմանիչներն ունեն կարևոր նշանակություն բովանդակությունը հասանելի դարձնելու համար, քանզի դիմակների օգտագործման պայմաններում հնարավոր չէ կարդալ շրթունքներով: Էլեկտրոնային սարքերը՝ էկրանները, ստեղնաշարերը, բարձրախոսները և այլն, պետք է ախտահանվեն՝ դրանք արտադրող ընկերությունների ցուցումների համաձայն: Հատկապես այն դեպքում, երբ միջոցառումները հեռարձակվում են տեսանյութերի միջոցով, մասնակիցները պետք է գիտակցեն, որ իրենց վարքագիծը դիտարկվելու է և, որպես առաջնորդներ ու ներգործություն ունեցող անձինք, նրանք պետք է ծառայեն որպես լավ օրինակ և մոդելավորեն հիվանդության տարածման նվազեցմանն ուղղված համապատասխան նախազգուշական միջոցները:

Դիտարկումներ առկա կարգով անցկացվող հանրահավաքների վերաբերյալ

Քանի որ երկրների զգալի մասը սահմանափակել է հավաքների ժամանակ անձանց թույլատրելի քանակը՝ COVID-19-ի տարածումը զսպելու համար, հանրային նախընտրական միջոցառումները, ինչպես օրինակ հանրահավաքները, մեծամասամբ կասեցվել են: Եթե իշխանությունները, այդուհանդերձ, թույլատրեն այդ միջոցառումները, ապա դրանց անցկացման ժամանակ անհրաժեշտ է լինելու պահպանել մի շարք ցուցումներ:

Հանրահավաքները և քարոզչական այլ միջոցառումները բարդ վերահսկելի են և, որպես կանոն, գտնվում են ԸՎՄ-ների ուղղակի իրավասության սահմաններից դուրս: Սակայն նույնիսկ այդ պայմաններում ԸՎՄ-ները կամ կուսակցությունները՝ առողջապահության ոլորտի պետական մարմինների հետ համատեղ, կարող են հովանավորել առցանց ֆորումները, սեմինարները կամ վերապատրաստումները: Դրանց ժամանակ կարող են դիտարկվել ռիսկերի նվազեցման հիմունքները, իսկ թեկնածուները կարող են հնարավորություն ստանալ բարձրացնելու իրենց հուզող հարցերը և խնդիրները: Կուսակցությունները՝ առողջապահության ոլորտի պետական մարմինների հետ համատեղ, պետք է նաև սահմանեն հանրային միջոցառումների շրջանակում նախատեսված ուսումնական նյութերը: Թեկնածուները և նրանց թիմերը պետք է ստանձնեն պատասխանատվություն՝ բոլոր քարոզարշավների ժամանակ պահանջված սոցիալական հեռավորության պահպանման, ռիսկային գոտում գտնվող անձանց պաշտպանության և փակ տարածքներում տեղի ունեցող գործընթացների ժամանակ մուտքի և ելքի ընթացակարգերի պահպանման համար: Այդ ընթացակարգերը պետք է ներառեն ձեռքերի ախտահանումը ջրով և օճառով կամ ալկոհոլային հիմքով լուծույթով նախքան մուտքն ու ելքը, ինչպես նաև շենքի ներսում և դրսում գտնվող անձանց կանոնավոր շարժը՝ շփումից խուսափելու համար: Ներկաները պետք է կրեն դիմակներ: Կուսակցությունների և թեկնածուների թողարկած հանրային հավաքների բոլոր հրավերները պետք է պարունակեն հանրային առողջապահությանը նվիրված բաժին, որում նշված կլինեն մասնակցության վերաբերյալ վերոնշյալ ցուցումները: Բեմում ելույթ ունեցողները ևս պետք է հետևեն առողջապահական մարմինների սահմանած նախազգուշական միջոցառումներին, ինչպես, օրինակ, դիմակների կրումը, աջակիցների հետ ձեռքսեղմումից և ուղիղ շփման այլ ձերից խուսափումը և այլն:

Դիտարկումներ «դռնեղու» քարոզչության վերաբերյալ

«Դռնեղու» իրականացվող քարոզչության ժամանակ ևս պետք է պահպանվեն ռիսկերի նվազեցմանն ուղղված ցուցումները՝ սահմանափակելու միջանձնային շփումները և նվազեցնելու թռուցիկների և քարոզչական այլ նյութերի փոխանցման հետ կապված ռիսկերը: Ինչպես արդեն նշվել է, չափազանց կարևոր է, որ քարոզարշավի մասնակիցները միմյանցից պահպանեն անհրաժեշտ սոցիալական հեռավորություն, կրեն դիմակներ կամ այլ պաշտպանիչ միջոցներ և կիրառեն նյութերի փոխանցման անհպում մեխանիզմներ (օրինակ, նյութերը ոչ թե առձեռն փոխանցել բնակիչներին, այլ թողնել դռների առջև):

Դիտարկումներ մասնակցության ցուցանիշի կամ ընտրական արդյունքների շահարկման նպատակով օգտագործվող COVID-19-ի մասին ապատեղեկատվության վերաբերյալ

Հաղորդագրությունների բովանդակությունը նախընտրական քարոզարշավների մեկ այլ կարևոր բաղկացուցիչ է: Հանրային առողջապահական ճգնաժամի ընթացքում և՛ գործող պաշտոնատար անձինք, և՛ ընդդիմադիր թեկնածուները կարող են փորձել քաղաքական օգուտներ քաղել ընտրական գործընթացներում իրականացվող փոփոխություններից և քաղաքացիների շրջանում առկա վախերից⁴¹: Օրինակ, թեկնածուները կարող են չափազանցնել հիվանդության տարածման ռիսկերն ընտրությունների ընթացքում՝ նվազեցնելու մասնակցության ցուցանիշը այն տարածքներում, որտեղ նրանք վայելում են ոչ մեծ աջակցություն, կամ տարածեն ապատեղեկատվություն, ըստ որի հիվանդությունն ասոցացվում է կոնկրետ խմբերի հետ: Առաջարկվում է, որ ԸՎՄ-ները կուսակցությունների հետ համատեղ մշակեն վարքագծի կանոններ կամ գործող կանոններում ավելացնեն COVID-19-ի վերաբերյալ բաժիններ, պատժամիջոցներ կիրառեն նրանց նկատմամբ, ովքեր խախտում են դրանցում ներառված սկզբունքները և վերահսկեն ընտրարշավների ընթացքը՝ խախտողներին հայտնաբերելու և համապատասխան պատիժներ կիրառելու համար:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Դիտարկումներ հիվանդության և նախազգուշական միջոցառումների մասին ընտրողներին իրազեկելու վերաբերյալ

Իրազեկումն անհրաժեշտ է, որպեսզի մարդիկ տեղյակ լինեն, թե ինչպես իրենց պահեն ընտրական գործընթացների ժամանակ, ինչպես նաև ընտրության կազմակերպիչների, ընտրողների ու այլ շահագրգիռ անձանց շրջանում առկա անհիմն վախերը ցրելու համար, ինչը կարող է ազդել մասնակցության ցուցանիշի վրա: Ընտրողները պետք է իմանան վիրուսի էությունը, դրա փոխանցման և տարածումը կանխելու եղանակները: ԸՎՄ-ները պետք է նաև մարդկանց հստակ ներկայացնեն այն բոլոր գործողությունները և միջոցները, որոնք ձեռնարկվել են ռիսկերի նվազեցման և ընտրողների ու ընտրական գործընթացի այլ մասնակիցների առողջությունը պաշտպանելու նպատակով: Կորոնավիրուսի փոխանցման վերաբերյալ կրթական պաստառները, վիդեոները և հանրային ծառայության այլ հայտարարությունները պետք է հրապարակվեն կամ ցուցադրվեն բոլոր այն հանրային վայրերում, որտեղ մարդիկ հավաքվում են ընտրությունների ընթացքում: Ընտրողների և թեկնածուների գրանցման գրասենյակներին, ընտրատեղամասերին և տարածքային ընտրական հանձնաժողովի մշտական գրասենյակին պետք է տրվեն հատուկ ցուցումներ՝ պաստառների և հանրային առողջապահությանը վերաբերող հաղորդագրությունների ցուցադրման մասին:

Կրթական նյութերի մշակման ժամանակ ԸՎՄ-ները պետք է հետևեն առողջապահական գրագիտության սկզբունքների պահպանմանը⁴², ինչպես օրինակ.

- **Հաղորդագրությունների քանակի սահմանափակում:** Քննարկել միանգամից մեկ գաղափար և ներկայացնել ոչ ավել, քան երեք կամ չորս ցուցում (օրինակ, ձեռքերի փխտահանման դեմքին կամ մակերևույթներին չհիպչելու, շնչառական հիգիենա պահպանելու, դիմակներ կրելու վերաբերյալ հիշեցումներ և ցուցումներ):
- **Ընտրողներին ասել, թե ինչ անել:** Օգտագործել ուղիղ խոսք և դրական երանգ, կենտրոնանալ գործողությունների և այն բանի վրա, թե ինչ է պետք անել, այլ ոչ՝ ինչ չպետք է անել (օրինակ, ոչ թե «*Չքվեարկել և չլքել ընտրատեղամասը՝ առանց փխտահանելու ձեռքերը*», այլ «*Ախրա-հանք ձեռքերը նախքան քվեարկելը և քվեարկելուց հետո*»):
- **Քառերի ընտրություն:** Հստակության համար օգտագործել կարճ նախադասություններ և պարզ կամ ծանոթ բառեր, խուսափել տեխնիկական կամ գիտական լեզվի ու ավելորդ հապավումների գործածումից:
- **Պատկերների ընտրություն:** Օգտագործել այնպիսի տառատեսակներ և տառաչափեր, որոնք հեշտ ընթերցելի են ու այնպիսի պատկերներ, որոնք ներկայացնում են ցանկալի առողջապահական վարքագիծ: Պատկերները պետք է լինեն լավ որակի, որպեսզի հնարավոր լինի ապահովել խոշոր տպագրություններ՝ մշակութային առումով համարժեք և զգայուն:

ԸՎՄ-ները պետք է նաև լուծեն ապատեղեկատվական քարոզչության և մարզինալացված խմբերի նկատմամբ ատելության խոսքի խնդիրը՝ ընտրողներին իրազեկման ճանապարհով:



Ընտրողների կրթական նյութերի օրինակներ 2014թ. Լիբերիայում էքզոլայի բռնկման ժամանակ

Դիտարկումներ նոր ընտրական ընթացակարգերի մասին ընտրողներին իրազեկման վերաբերյալ

Քաղաքացիները պետք է ոչ միայն լավ տեղեկացված լինեն վիրուսի և դրա տարածման եղանակների մասին, այլև գիտակցեն, որ ընտրական գործընթացի յուրաքանչյուր քայլ կարող է փոփոխվել՝ առողջապահական նախագգուշական միջոցներին համապատասխան: Օրինակ, եթե որոշվի, որ ընտրողներն այլևս իրենց անձը հաստատող փաստաթղթերը չեն հանձնելու ընտրատեղամասի աշխատակիցներին՝ պոտենցիալ ֆոմիտներից խուսափելու համար, ապա անձի ինքնության ստուգման նոր ցուցումները պետք է նախապես ներկայացվեն հանրային ծառայության հայտարարությունների և այլ քարոզչական խողովակների միջոցով, ցուցադրվեն ընտրատեղամասերում և, անհրաժեշտության դեպքում, նորից ներկայացվեն ընտրատեղամասի աշխատակիցների կողմից: ԸՎՄ-ները և ՔՀԿ-ները պետք է նաև համակարգեն իրենց աշխատանքն այլ կազմակերպությունների հետ՝ ապահովելու մարզինալացված համայնքներին տեղեկատվության հասանելիությունը, ինչպես նաև ներդրումներ կատարեն սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար հաղորդագրությունները մատչելի դարձնելու նպատակով՝ օրինակ ենթագրերի և ժեստերի լեզվի միջոցով:

Ընտրողների գրանցման, թեկնածուների առաջադրման կամ քվեարկության համար այլընտրանքային մեթոդների օգտագործման դեպքում ԸՎՄ-ները պետք է լինեն առավել ուշադիր նոր ցուցումները քաղաքացիներին ներկայացնելու հարցում: Առցանց կամ փոստային ձևաթղթերը պետք է լինեն հնարավորիս պարզ, ուղեկցվեն մանրամասն ցուցումներով և հաստատմամբ կամ քաղաքացիներին ուղղված այլ երաշխիքներով, որ վերջիններս իրենց գործառույթները պատշաճ կարգով կատարել են: Նոր ընթացակարգերի և տեխնոլոգիաների ներմուծումը կարող է կասկած հարուցել հատկապես բևեռացված միջավայրերում, որտեղ մեկ կամ ավել կուսակցություններ կարող են օգուտներ քաղել գործընթացի լեգիտիմության պառակտումից: Ուստի, տեղեկատվության թափանցիկությունը և նոր մեթոդների յուրացման գործում հանրությանն աջակցությունը վճռորոշ նշանակություն ունեն արդյունքների լեգիտիմության համար:

“ Նոր ընթացակարգերի և տեխնոլոգիաների ներմուծումը կարող է կասկած հարուցել հատկապես բևեռացված միջավայրերում, որտեղ մեկ կամ ավել կուսակցություններ կարող են օգուտներ քաղել գործընթացի լեգիտիմության պառակտումից: Ուստի, տեղեկատվության թափանցիկությունը և նոր մեթոդների յուրացման գործում հանրությանն աջակցությունը վճռորոշ նշանակություն ունեն արդյունքների լեգիտիմության համար:

Ընտրողների գրանցում

Դիտարկումներ ընտրողների գրանցման միջոցների վերաբերյալ

Տարբեր երկրների բնորոշ են ընտրողների գրանցման տարբեր իրավական շրջանակներ: Երկրների շուրջ 36 տոկոսը⁴³ կիրառում է ամենապարզ ընթացակարգը, երբ ԸՎՄ-ն ընտրացուցակի համար տեղեկատվությունը ներբեռնում է քաղաքացիների հաշվառման գրանցամատյանից կամ հարկային մարմնի արձանագրություններից: Այնուհետև, ԸՎՄ-ները յուրաքանչյուր ընտրողի կցում են կոնկրետ տեղամասի և դրա մասին ընտրողին տեղեկացնում էլեկտրոնային փոստի, հաղորդագրության կամ ԸՎՄ-ի պաշտոնական կայքէջի միջոցով: Մի շարք երկրներում տեղեկատվության փոխանակումը տեղի է ունենում պոտենցիալ ընտրողի և ընտրական մարմնի միջև: Դա կարող է իրականացվել անձամբ կամ անուղղակիորեն, օրինակ, փոստային ձևաթղթերի և ընտրողների առցանց գրանցման միջոցով:

Ընտրողների գրանցման որոշ ընթացակարգեր կարող են հանգեցնել մարդկանց կուտակումների, հատկապես՝ գրանցման փուլի սկզբում և ավարտին, քանզի ԸՎՄ-ները և կուսակցություններն իրականացնում են ընտրողների գրանցման արշավներ: Առկա կարգով ընտրողների գրանցման գործընթացների հետ կապված ռիսկերի մեծ մասը նույնն է, ինչ առկա կարգով քվեարկության դեպքում է: Միաժամանակ, առաջինի դեպքում այդ ռիսկերը զգալիորեն ավելի քիչ են, քանզի ավելի քիչ թվով անձինք են, որպես կանոն, գրանցվում նույն օրը: Բացի այդ, ԸՎՄ-ների աշխատակիցների, լրատվամիջոցների ներկայացուցիչների, տեղական և միջազգային դիտորդների ու կուսակցությունների լիազոր ներկայացուցիչների քանակը ևս անհամեմատ ավելի փոքր է գրանցումների ժամանակ, ինչը հնարավոր է դարձնում սոցիալական հեռավորության պահպանումը: Այդուհանդերձ, եթե օրենսդրական շրջանակները թույլ են տալիս, ապա ԸՎՄ-ները կարող են երկարաձգել գրանցման շրջանը կամ մեծացնել գրանցման օրերի թիվը՝ մարդկանց կուտակումներից խուսափելու համար: «Ընտրատեղամասերի աշխատանք» բաժնում ներկայացված են մանրամասն առաջարկություններ՝ տարածքի ընտրության, կահավորման և ախտահանման միջոցների վերաբերյալ:

Դիտարկումներ ընտրողների գրանցման սարքավորումների և պարագաների վերաբերյալ

Վերջին երկու տասնամյակի ընթացքում երկրների մի մասը ներդրել է ընտրողների կենսաշափական նույնականացման համակարգ՝ խարդախության ռիսկերը նվազեցնելու համար: Այդ մոտեցումը մեծացրել է հանրային վստահությունը ընտրացուցակների նկատմամբ, սակայն ընտրողների գրանցման գործընթացը դարձրել է ավելի բարդ և մեծացրել հիվանդության տարածման հնարավորությունները: Նոր կենսաշափական բաղադրիչի համար դյուրակիր համակարգիչների, թվային ֆոտոխցիկների և մատնահետքերի սկանների գործարկումից զատ, գրանցում իրականացնող անձինք հաճախ պետք է լրացնեն նաև գրանցման ավանդական ձևաթղթերը: ԸՎՄ-ները պետք է կարողանան արդյունավետ կերպով նվազեցնել կորոնավիրուսի փոխանցման ռիսկերը՝ անկախ նրանից՝ աշխատում են թղթային, թե էլեկտրոնային տարբերակով:

Քվեարկության համար գրանցվողներից հաճախ պահանջվում է ներկայացնել լրացված ձևաթղթեր և ինքնությունը հաստատող պաշտոնական փաստաթղթեր: Այդ փաստաթղթերը ժամեր կամ օրեր շարունակ կարող են պահպանել հիվանդության հարուցիչներ՝ կախված դրանց նյութի տեսակից⁴⁴: Ուստի, հնարավորության դեպքում, պետք է խուսափել դրանք հանձնել առձեռն: Կան նաև մի շարք ռիսկեր՝ կապված ընդհանուր գրասենյակային պարագաների օգտագործման հետ, ինչպիսիք են, օրինակ, գրանցման դիմումները լրացնելու և ստորագրելու համար նախատեսված գրիչները: ԸՎՄ-ները պետք է գրանցվողներին կոչ անեն օգտագործել սեփական գրիչները և այդ ու ցանկացած այլ պահանջ (օրինակ, թանաքի գույնի վերաբերյալ) ներկայացնեն հանրային իրազեկման արշավների ժամանակ: Ընտրողների գրանցման գրասենյակները պետք է տրամադրեն մեկանգամյա օգտագործման գրիչներ, քանզի ախտահանող անձեռոցիկների միջոցով դրանց ախտահանումը յուրաքանչյուր գրանցվողից հետո ավելի ժամանակատար է:

Գրանցման գործընթացի ժամանակ վարակի տարածման ռիսկերը կապված են նաև գրանցողի և գրանցվողի միջև անհրաժեշտ սոցիալական հեռավորության պահպանման պայմանի հետ: Պետք է մշակվեն վարքագծի համապատասխան կանոններ, որոնց համաձայն գրանցվողներն իրենց փաստաթղթերը կդնեն ախտահանված տարածքում՝ հատուկ սեղանի վրա, այնուհետև կկանգնեն սահմանված վեց ոտնաչափ հեռավորությամբ՝ հատակին կամ պատին արված գծանշանների ուղղորդմամբ, որպեսզի գրանցողները կարողանան մոտենալ փաստաթղթերին և ստուգել անունները, լուսանկարները և ստորագրությունները: Մեկ այլ տարբերակի համաձայն, գրանցողների և գրանցվողների միջև կարող են տեղադրվել օրգանական ապակուց պատրաստված թափանցիկ պաշտպանիչ թաղանթներ, որոնք պետք է հաճախակի ախտահանվեն: Այն առանձնացված տարածքները, որտեղ գրանցվողները կարող են լրացնել ձևաթղթերը, ևս պետք է հաճախակի ախտահանվեն և լինեն գծանշված՝ մարդկանց միջև սոցիալական հեռավորության ապահովման նպատակով:

Այն երկրներում, որտեղ ընտրողների գրանցման համար օգտագործվում են տարբեր տեխնոլոգիաներ, ինչպիսիք են, օրինակ, կենսաչափական տվյալների ստուգման համար անհրաժեշտ մատնահետքի սկաները, թվային ֆոտոխցիկները և աչքի ծիածանաթաղանթի սկանավորման սարքերը, պետք է ներդրվեն որոշ հավելյալ վարքագծի կանոններ: ԸՎՄ-ները պետք է կապ հաստատեն արտադրող ընկերությունների հետ՝ մանրամասն ցուցումներ ստանալու համար այն մասին, թե որ արտադրանքները կարող են օգտագործվել և ինչպես դրանք ճիշտ օգտագործել սարքերն ախտահանելու համար՝ առանց դրանք մխասելու: ԱՄՆ Ընտրական աջակցության հանձնաժողովը կազմել է ռեսուրսների օգտակար ցուցակ տարբեր մատակարարների և արտադրողների կողմից, որոնցում նշված են նաև խորհրդատվություններ, թե ինչպես մաքրել էլեկտրոնային քվեարկության մեքենաները և այլ ընտրական տեխնոլոգիաները⁴⁵: Հնարավորության դեպքում, մատնահետքերի ստուգման անհպում մեխանիզմները և դեմքի ճանաչման սարքերն ավելի լավ լուծում են, քանզի դրանց միջոցով հնարավոր է խուսափել ֆոմիտների ռիսկից: Դեմքի ճանաչման նորագույն տեխնոլոգիաները կարող են ճանաչել ընտրողների ինքնությունը նույնիսկ դիմակների առկայության դեպքում: Գրանցում իրականացնողները պետք է նաև պահպանեն սոցիալական հեռավորություն՝ գրանցվողներին լուսանկարահանման կամ նրանց աչքերի ծիածանաթաղանթի սկանավորման ժամանակ: Սովորաբար տեսախցիկի և օբյեկտի միջև պահանջվում է վեց ոտնաչափից ավելի քիչ հեռավորություն՝ այնպիսի լուսանկարներ ստանալու համար, որոնք հետագայում կարող են օգտագործվել դեմքի ճանաչման համար: Որոշ դեպքերում տեսախցիկն ընտրողների գրանցման կենսաչափական համակարգի անբաժան մասն է, և օպերատորը հաճախ ստիպված է լինում մոտ կանգնել գրանցվողներին: Ուստի, այդ պայմաններում գրանցում իրականացնող աշխատակիցները պետք է կրեն ավելի անվտանգ անձնական պաշտպանիչ միջոցներ:

Եթե մեկից ավել աշխատողներ են օգտագործում դյուրակիր համակարգիչը կամ աշխատասեղանը՝ ընտրողներին գրանցելու համար, ապա դրանք պետք է ախտահանվեն յուրաքանչյուր օգտագործողից հետո: Նույնը վերաբերում է նաև համակարգչային մկնիկին, տպիչին և այն գրասենյակային պարագաներին, որոնք օգտագործվում են ամենօրյա ռեժիմով (օրինակ, դակիչներ, մարկերներ, ամրակներ և այլն):

Ընտրատեղամասի աշխատակիցների հավաքագրում և վերապատրաստում

Դիտարկումներ ընտրատեղամասի աշխատակիցների հավաքագրման վերաբերյալ

Թեև սահմանված չափանիշներին համապատասխանող որևէ քաղաքացի չպետք է զրկված լինի որպես ընտրական տեղամասի աշխատակից ծառայելու իր իրավունքից, արտակարգ իրավիճակներում, ինչպես, օրինակ, հանրային առողջապահական ճգնաժամը, ԸՎՄ-ները պետք է դիտարկեն որոշ սահմանափակումներ կամ նախազգուշակաան միջոցառումներ՝ հավաքագրման գործընթացը նախաձեռնելիս: Այդ նկատառումներից առաջինը վերաբերում է բուժաշխատողներին: Հանրային առողջապահական ճգնաժամերի ժամանակ հիվանդանոցներն ու այլ բժշկական հաստատությունները, որպես կանոն, լինում են գերծանրաբեռնված, և բուժաշխատողներն ունենում են մեծ զբաղվածություն խնամքի կարիք ունեցող հիվանդների զգալի ներհոսքի պատճառով: Հատկապես այն երկրներում, որտեղ ընտրատեղամասի աշխատակցի ծառայությունն ունի պարտադիր բնույթ, ԸՎՄ-ները պետք է աշխատեն բոլոր բուժաշխատողներին ազատել այդ պարտականությունից: Մարդկանց այն խմբերը, ովքեր գտնվում են ավելի բարձր ռիսկային խմբում կամ ունեն ծանր ախտանշաններ և, հետևաբար, այդ հիվանդությունից մահացության ավելի բարձր ռիսկեր, ևս պետք է ազատվեն ընտրատեղամասի աշխատակցի պարտականություններից: COVID-19-ի դեպքում ապացուցվել է, որ տարեցները և սուր խրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք ունեն հիվանդության սուր դրսևորումների ավելի մեծ ռիսկեր: ԸՎՄ-ները պետք է դիտարկեն այդ անձանց՝ ընտրատեղամասի աշխատակցի պարտականություններից ազատելու հնարավորությունը, կամ առնվազն տրամադրեն բոլոր

անհրաժեշտ պաշտպանիչ պարագաները և ապահովեն ողջամիտ պայմաններ, որոնք թույլ կտան նրանց աշխատել անվտանգ և արդյունավետ կերպով:

Չնայած առողջապահական ճգնաժամի հետևանքով մասնակցության ցուցանիշի պոտենցիալ անկմանը, ԸՎՄ-ները պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեն վերապատրաստման գործընթացին, քան ընտրատեղամասերի աշխատակիցների քանակի կրճատմանը: Քանզի աշխատակիցներից ոմանք կարող են հիվանդանալ, մյուսները ստիպված լինեն հոգ տանել իրենց հիվանդ հարազատների մասին կամ պարզապես ազատվեն հիվանդության նկատմամբ ունեցած վախի պատճառով ընտրությունների օրվանից անմիջապես առաջ⁴⁶, ուստի կարևոր է, որ նրանց փոխարինեն որակավորված և լավ վերապատրաստված անձինք:

Դիտարկումներ ընտրատեղամասերի աշխատողների առկա կարգով վերապատրաստումների վերաբերյալ

Հանրային առողջապահական ճգնաժամի ընթացքում ընտրատեղամասի աշխատակիցների և ընտրական գործընթացում բոլոր ներգրավված անձանց վերապատրաստումը պետք է համալրվի հիվանդության վերաբերյալ լրացուցիչ դասընթացներով: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի հիվանդության տարածման և դրա զսպման մեխանիզմների վրա: Ընտրատեղամասի աշխատակիցները պետք է նաև ստանան հատուկ ցուցումներ այն մասին, թե ինչպես պահպանել սեփական և ընտրողների առողջությունն ընտրական գործընթացի ժամանակ՝ ինչպես ճիշտ կրել դիմակներ և ձեռնոցներ, երբ և ինչպես ախտահանել ձեռքերն ու մակերևույթները, ինչպես կարգավորել հերթերը և ինչպես հիշեցնել ընտրողներին անհրաժեշտ վարքագծի մասին ընտրական գործընթացի ողջ ընթացքում: Վերապատրաստման նյութերը պետք է ներառեն վերոնշյալ ցուցումները և բոլոր այն հատուկ միջոցները, որոնք պետք է ձեռնարկեն ընտրատեղամասի աշխատակիցները և ընտրողները:

ԸՎՄ-ները պետք է նաև նկատի ունենան, որ նույնիսկ ընտրատեղամասերի փորձառու աշխատակիցները կունենան հավելյալ ուշադրության կարիք, եթե ընտրական գործընթացում ներդրվեն նոր ընթացակարգեր: Ամբողջ նոր տեղեկատվությունը պետք է հստակ ներկայացված լինի վերապատրաստման նյութերում և փոխանցվի ընտրատեղամասի աշխատակիցներին՝ հարցերին պատասխանելու, անհրաժեշտ պարզաբանումներ անելու և նյութի մատչելիությունը ապահովելու համար: Եթե որոշվի վերապատրաստումն անցկացնել առկա կարգով, ապա կազմակերպիչները պետք է հաշվի առնեն լսարանի քանակը (նկատի ունենալով այն սահմանափակումները, թե քանի հոգի միաժամանակ կարող է մասնակցել) և մասնակիցների միջև սոցիալական հեռավորության պահանջը՝ անհրաժեշտության դեպքում վերապատրաստումն անցկացնելով ավելի ընդարձակ տարածքներում: Պետք է նաև տրամադրվեն ձեռքերի և մակերևույթների ախտահանման համար անհրաժեշտ բոլոր պարագաները (մանրամասները ներկայացված են «Ընտրատեղամասերի աշխատանք» բաժնում), իսկ ձեռքերի ախտահանման և շնչառական հիգիենայի վերաբերյալ ցուցումներով և հիշեցումներով պաստառները պետք է ցուցադրվեն բոլոր հանրային վայրերում:

Դիտարկումներ հեռավար և վիրտուալ վերապատրաստման դասընթացների վերաբերյալ

Եթե ընտրատեղամասերի աշխատակիցների վերապատրաստումը հնարավոր լինի անցկացնել հեռավար կարգով, մասնավորապես՝ վիրտուալ դասերի և առցանց հարթակների միջոցով, ապա հնարավոր կլինի լուծել մարդկանց կուտակումների հարցը, բայցևայնպես կառաջանան մի շարք այլ մարտահրավերներ: ԸՎՄ-ները պետք է ապահովեն բոլոր աշխատակիցների մասնակցությունը դասընթացներին, ինչը պահանջում է որակյալ ինտերնետային կապ և տեխնոլոգիաներին հասանելիություն ամբողջ երկրում և տարբեր սոցիալական խմբերի շրջանում: Դասընթացների ձևաչափը պետք է լինի ներառական և հասանելի բոլորի,

այդ թվում՝ սահմանափակ հնարավորություններ ունեցող և նոր տեխնոլոգիաներին ավելի քիչ տիրապետող անձանց համար: ԸՎՄ-ները կարող են նաև մասնակիցներին ապահովել ինտերնետին հասանելիություն ունեցող համակարգիչներով և տրամադրել օժանդակ անձնակազմ՝ դասընթացը հաջողությամբ ավարտելու համար: Այդ նպատակով առանձնացված տարածքները պետք է համապատասխանեն ախտահանման և սոցիալական հեռավորության պահանջներին (մանրակրկիտ ախտահանում յուրաքանչյուր օգտագործողից հետո և առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն համակարգչային սեղանների միջև): Պետք է հաշվի առնել նաև ժամային ընդմիջումները՝ կրճատելու միաժամանակ տարածքի ներսում գտնվող անձանց թիվը:

Ի լրումն այս միջոցառումների, որոնք ուղղված են պաշտպանելու վերապատրաստման մասնակից ընտրատեղամասային աշխատակիցներին, ԸՎՄ-ները պետք է հաշվի առնեն նաև այն մեխանիզմները, որոնք թույլ կտան, որ վերջիններս իսկապես հաջող ավարտեն դասընթացը և ստանան բոլոր անհրաժեշտ գիտելիքները: Քանզի դասընթացներն անցկացվելու են հեռավար կարգով, ԸՎՄ-ների համար ավելի բարդ կլինի վերահսկել, թե արդյոք մասնակիցները դիտում են տեսանյութերը, կարդում են նյութերը և ուշադրություն դարձնում բովանդակությանը: Վիրտուալ նյութերի մշակման ժամանակ ԸՎՄ-ները պետք է նաև ներդնեն արդյունքների ստուգման մեխանիզմներ, ինչպես, օրինակ, ընթացիկ ստուգումներ, նախավերապատրաստական և հետվերապատրաստական թեստեր՝ վերապատրաստումների արդյունավետությունը վերահսկելու համար: Մասնակիցները պետք է բավարարեն որոշակի գնահատականի՝ նախքան ավարտական հավաստագիր ստանալը:

Պետական ու միջազգային դիտորդներ և կուսակցությունների լիազոր ներկայացուցիչներ

Դիտարկումներ դիտորդների հավաքագրման և տեղակայման վերաբերյալ

Դիտորդները և կուսակցությունների լիազոր ներկայացուցիչները կազմում են ընտրական գործընթացի բաղկացուցիչ մաս և ընտրատեղամասում ապահովում են կարևոր երաշխիքներ խախտումների և խարդախությունների դեմ: Այդ անձանց սպառնացող ռիսկերը նվազեցնելու համար՝ ԸՎՄ-ները, դիտորդական կազմակերպությունները և կուսակցությունները պետք է դիտարկեն յուրաքանչյուր տեղամասում դիտորդների և կուսակցությունների լիազոր ներկայացուցիչների թվաքանակի կրճատման հնարավորությունը կամ սահմանեն հերթափոխեր՝ միաժամանակ միևնույն տարածքում գտնվող խմբերից խուսափելու համար: Դիտորդները և կուսակցությունների լիազոր ներկայացուցիչները կարող են նաև նվազեցնել առողջապահական ռիսկերը՝ խուսափելով ընտրողների, ընտրատեղամասի աշխատակիցների ու ընտրական նյութերի հետ ուղղակի ֆիզիկական շփումից և պահպանելով սահմանված սոցիալական հեռավորությունը: Դիտորդները և կուսակցությունների լիազոր ներկայացուցիչները պետք է կրեն դիմակներ՝ հիվանդության տարածման ռիսկերը նվազեցնելու նպատակով:

Նախքան տեղակայումը, այնպես ինչպես ընտրատեղամասերի աշխատակիցների դեպքում է, դիտորդական կազմակերպությունները և կուսակցությունները պետք է դիտորդներին և կուսակցությունների լիազոր ներկայացուցիչներին տրամադրեն կրթական նյութեր և կազմակերպեն վերապատրաստման դասընթացներ՝ կորոնավիրուսի, դրա տարածման եղանակների, անձնական պաշտպանիչ միջոցների պատշաճ կրման, ձեռքերի ախտահանման և շնչառական հիգիենայի վերաբերյալ: ԸՎՄ-ները, կուսակցությունները և դիտորդական կազմակերպությունները պետք է նաև ազատեն ռիսկային խմբերում գտնվող անձանց և բուժաշխատողներին առկա կարգով ընտրություններին մասնակցությունից կամ նրանց լիարժեք իրազեկեն մասնակցության հնարավոր ռիսկերի մասին:

Դիտարկումներ դիտորդների և կուսակցությունների լիազոր ներկայացուցիչների հավատարմագրման վերաբերյալ

Թեև դիտորդներն ու կուսակցությունների լիազոր ներկայացուցիչները կատարում են տարբեր գործառույթներ, երկուսն էլ պետք է հավատարմագրվեն ԸՎՄ-ների կողմից՝ նախքան իրենց պարտականությունների ստանձնումը: Դա ենթադրում է, որ ընտրության կազմակերպիչները ստանալու են հավատարմագրման մեծ թվով դիմումներ բավական սեղմ ժամկետներում: Ուստի, հավատարմագրման գործընթացն էլ ավելի կբարդանա: Պետական կազմակերպությունները, որպես կանոն, պետք է նախ դիմեն ԸՎՄ-ներին ընտրություններում դիտորդական մարմնի հավաստագիր ստանալու համար: Դրանից հետո կազմակերպությունը ներկայացնում է յուրաքանչյուր դիտորդի համար առանձին դիմում: Որոշ դեպքերում դա կարող է իրականացվել առցանց եղանակով՝ օգտագործելով հատուկ այդ նպատակով ստեղծված կայքէջը⁴⁷: ԸՎՄ-ի հաստատումը ստանալուց հետո թողարկվում և դիտորդական կազմակերպություններին են հանձնվում անվանաքարտեր՝ ներքին օգտագործման համար: Այդուհանդերձ, հաճախ պահանջվում է, որ դիտորդներն անձամբ ներկայանան ԸՎՄ-ի հատուկ գրասենյակ, որտեղ աշխատակիցների թիվը ստանում և մշակում է դիմումի ձևաթղթերը, թողարկում է անվանաքարտեր՝ դիմորդի անձնական տվյալներով և լուսանկարով: Մի շարք երկրներում լուսանկարահանումն իրականացվում է հենց այդ գրասենյակներում: Հաճախ կատարվում են նաև կանխիկ կամ քարտային վճարումներ: Կուսակցությունների ներկայացուցիչների հավատարմագրումը մեծամասամբ երկփուլ գործընթաց է, սակայն ԸՎՄ-ները հաջողությամբ գրանցված թեկնածուներին կամ կուսակցություններին, սովորաբար դիտարկում են որպես ավտոմատ կարգով որակավորված՝ կուսակցության լիազոր ներկայացուցիչի դիմում ներկայացնելու համար: Միջանձնային շփումների մակարդակն այդ գործընթացում նույնն է, ինչ դիտորդների դեպքում է: Կուսակցությունների ներկայացուցիչներից ևս հաճախ պահանջվում է անձամբ ներկայանալ՝ հավատարմագրման ձևաթղթերը ստորագրելու և իրենց անվանաքարտերի համար լուսանկարվելու համար:

Դիտորդների և կուսակցությունների լիազոր ներկայացուցիչների հավատարմագրման գործընթացի ժամանակ ԸՎՄ-ի գրասենյակներում վիրուսի տարածման ռիսկերի նվազեցումը պահանջում է ընտրողների գրանցման և ընտրատեղամասերի աշխատանքի շրջանակում կիրառվող մոտեցումների համադրում: Եթե անձնական տեղեկատվություն և լուսանկարներ ստանալու համար կիրառվում է հավատարմագրման էլեկտրոնային համակարգը, ապա պետք է հաշվի առնվեն տեխնիկական սարքերի վերաբերյալ նախորդ բաժիններում դիտարկված ստանդարտ ընթացակարգերը: Մանրամասները ներկայացված են «Ընտրողների գրանցում» և «Ընտրատեղամասերի աշխատանք» բաժիններում: Բացի այդ, հավատարմագրման ամբողջ գործընթացի ժամանակ պետք է իրականացվի պատշաճ կարգով փաստաթղթերի փոխանակում ու ձևաթղթերի ստորագրում, շինության ներսում հաճախ օգտագործվող և շոշափվող տարածքների ախտահանում: Հնարավորության դեպքում ԸՎՄ-ն պետք է դիտարկի առցանց հավատարմագրման գործընթաց ներդնելու կամ ընդլայնելու հնարավորությունը: ԸՎՄ-ները պետք է նաև ներառեն այս բոլոր հանրային առողջապահական դիտարկումները դիտորդների և կուսակցության լիազոր ներկայացուցիչների հավատարմագրման վերաբերյալ ուղեցույցներում:

II փուլ. Ընտրությունների օր և հետընտրական գործընթացներ

Ընտրատեղամասերի աշխատանք

Քվեարկության գործընթացի ժամանակ հավաքվում և միմյանց հետ շփվում են առավել մեծ թվով մարդիկ՝ այդպիսով հանգեցնելով վիրուսի տարածման առավելագույն ռիսկերի: Բացի այդ, մարդկանց մեծ մասը հենց այդ օրն է խորապես ծանոթանում գործընթացի էությանը և պատկերացում կազմում դրա մասին, այդ թվում՝ ընթացակարգերի նպատակահարմարության և, ընդհանուր առմամբ, ընտրությունների անաչառության ու արժանահավատության մասին: Բարեբախտաբար, ընտրատեղամասը այն միջավայրն է, որի նկատմամբ ԸՎՄ-ն ունի ամենամեծ վերահսկողությունը, և պետք է գործադրվեն առավելագույն ջանքեր՝ բոլոր ընտրատեղամասերում ռիսկերը զրոյականի մոտեցնելու համար: Նույնիսկ եթե ոչ մի ընտրող կամ ընտրատեղամասի աշխատակից չունի COVID-19-ի որևէ ախտանշան, նա կարող է հանդիսանալ վիրուսի «լուռ տարածող»: Ուստի, պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցները՝ նույնիսկ ընտրատեղամասերում որևէ ախտանշան չունեցող անձանց գտնվելու պայմաններում:

Դիտարկումներ ընտրատեղամասերի գտնվելու վայրի վերաբերյալ

Վատ եղանակը կարող է ազդել ընտրությունների վրա և հանգեցնել դրսում մարդկանց ավելի մեծ կուտակումների (տես «Ընտրությունների և ռեսուրսների պլանավորում») բաժինը): Ընտրությունների կազմակերպիչները պետք է ընտրեն բավականաչափ մեծ տարածքներ՝ անձրևի և կայծակի դեպքում շինության ներսում մեծ թվով մարդկանց անվտանգ կերպով ընդունելու համար: Ցանկալի է, որ շինություններն ունենան բաց տարածքներ կամ մի քանի պատուհաններ և դռներ՝ բնական օդափոխություն իրականացնելու համար: Հնարավորության դեպքում նստատեղերը և հերթերը պետք է դասավորվեն այնպես, որպեսզի հնարավոր լինի կանխել քամու միջոցով վիրուսային կաթիլների փոխանցումը: Այդ տարածքները կարող են գտնվել հանրային շինություններում կամ այլ հանրային վայրերում, սակայն դրանք պետք է նախապես որոշվեն: Ընտրությունների կազմակերպիչները պետք է ապահովեն ընտրված շինությունների հասանելիությունը և տեղյակ լինեն արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանից, որպեսզի կարողանան ընտրողներին ուղղորդել դեպի այդ փակ տարածքներ՝ հետևելով մուտքի, սոցիալական հեռավորության, ձեռքերի ախտահանման և ելքի վերաբերյալ վարքագծի կանոնների պահպանմանը:

Բացի բավականաչափ մեծություն և փակ տարածքներ ունեցող շինության պայմանից, ԸՎՄ-ները պետք է նաև ապահովեն ընտրատեղամասերի տեղակայվածությունն անվտանգ, հասանելի տարածքներում՝ չմեծացնելով առողջապահական ռիսկերը ռիսկային խմբերում գտնվող անձնաց համար: Օրինակ, եթե երեխաներն են խոցելի խմբում, ապա ընտրատեղամասերը պետք է տեղակայվեն դպրոցներից հեռու: COVID-19-ի դեպքում, հաշվի առնելով այն, որ առավել խոցելի են տարեցները և սուր խրոնիկ հիվանդություն ունեցող անձինք, պետք է ապահովել, որ ընտրատեղամասերը տեղակայվեն այդ խմբերի կուտակման կամ բնակության վայրերից, օրինակ՝ ծերանոցներից և հիվանդանոցներից հեռու: Կարևոր է նաև նշել, որ այդ փոփոխությունները որևէ դեպքում չեն կարող զրկել ռիսկային խմբերում գտնվող անձանց իրենց ընտրական իրավունքից: Երկրի իրավական դաշտի շրջանակներից կախված՝ ԸՎՄ-ները պետք է դիտարկեն նաև այլընտրանքային տարբերակներ, օրինակ՝ էլեկտրոնային քվեաթերթիկների տրամադրում բացակա քվեարկողներին՝ թույլ տալով վստահված անձի կողմից քվեարկություն, կամ հատուկ ժամանակի հատկացման ճանապարհով, որպեսզի ռիսկային խմբերում գտնվող անձինք կարողանան քվեարկել՝ առանց հերթ կանգնելու և այլ անձանց հետ շփվելու:

Դիտարկումներ ընտրատեղամասերի կահավորման վերաբերյալ

Յուրաքանչյուր ընտրատեղամասի կահավորումը պետք է մանրակրկիտ պլանավորվի: Ընտրատեղամասի աշխատակիցների սեղանների և աթոռների դասավորությունը պետք է համապատասխանի սահմանված հեռավորության պահանջին: Ընտրատեղամասերի աշխատակիցները պետք է վերահսկեն ընտրողների հոսքը ընտրական գործընթացի յուրաքանչյուր փուլի ժամանակ՝ միջանձնային շփումներից խուսափելու և սարքերի օգտահանումն իրականացնելու համար: ԸՎՄ-ները պետք է նաև վերացնեն այն բոլոր քայլերը, որոնց ընթացքում հնարավոր է առարկաների անհարկի շոշափում: Օրինակ, կարելի է նախապատվություն տալ այնպիսի շինությունների, որոնցում կան քիչ դռներ կամ ավտոմատ բացվող և փակվող դռներ՝ բռնակների հետ շփումից խուսափելու համար, ինչպես նաև օգտվել առանց վարագույրների ֆիքսված քվեախցիկներից՝ կանխելով ընտրողների շփումը գործվածքների հետ:



Թեև վարագույրներն օգնում են ապահովել քվեարկության գաղտնիությունը, COVID-19-ի ճգնաժամի ընթացքում դրանցից պետք է խուսափել՝ վարակի տարածման ռիսկերը նվազեցնելու համար:

Ընտրատեղամասերից անհրաժեշտ է դուրս բերել նստարանները, առանձնացնել կողք կողքի դրված աթոռները և ազատվել ոչ անհրաժեշտ առարկաներից ու մակերևույթներից: Ընտրատեղամասերի վրա կարող են տեղադրվել օրգանական ապակուց պատրաստված կամ այլ թափանցիկ պաշտպանիչ թաղանթներ՝ ուժեղացնելու ընտրատեղամասի աշխատակիցների և ընտրողների միջև պատնեշը և օգնելու արգելափակել վիրուսային կաթիլների փոխանցումը: Այդ պաշտպանիչ թաղանթները պետք է հաճախակի փոխարինվեն:

Դիտարկումներ հերթերի և մուտքերի ու ելքերի համար սահմանված վարքագծի կանոնների վերաբերյալ

Ընտրությունների օրը պարունակում է առավելագույն ռիսկեր, քանզի հենց այդ օրն է արձանագրվում մարդկանց մեծ թվով կուտակումներ: Թեև բոլոր դեպքերում պետք է հարգել սոցիալական հեռավորության ընդհանուր սկզբունքները, այդուհանդերձ ընտրությունների օրվա համար պետք է ներդրվեն նաև հատուկ մեխանիզմներ՝ հերթերում սոցիալական հեռավորության պահպանումն ապահովելու համար՝ օգտագործելով արդեն ներկայացված պարզ համակարգերը, ինչպես, օրինակ, ժապավեններով հանգույցները՝ միմյանցից վեց ոտնաչափ հեռավորությամբ: Դրանց որևէ կերպ չդիպչելու համար խորհուրդ է տրվում նաև օգտագործել կաշուն ժապավեններ՝ նախանշելու, թե որտեղ պետք է կանգնի անձը: Բոլոր այն իրավիճակների համար, որոնց դեպքում գոյանում են հերթեր, կրթական պաստառները պետք է կենտրոնացած լինեն սոցիալական հեռավորության և վիրուսի տարածման եղանակների վրա, իսկ ընտրատեղամասի աշխատակիցներին պետք է հանձնարարվի վերահսկել հերթերի ժամանակ սոցիալական հեռավորության վերաբերյալ ցուցումների պահպանումը:

Քվեարկության գործընթացի ժամանակ միջանձնային շփումների ռիսկերը նվազեցնելու նպատակով՝ ԸՎՄ-ները պետք է հաշվի առնեն նաև վարքագծի այնպիսի կանոնների մշակման հնարավորությունը, որոնք կուրվագծեն ընտրողների քայլերը սկզբից մինչև վերջ: COVID-19-ի դեպքում այդ կանոնները պետք է ներառեն ձեռքերի փոխանցումը մուտք գործելիս կամ քվեարկությունից առաջ և, հնարավոր է նաև, դուրս գալուց առաջ՝ որպես լրացուցիչ նախազգուշական միջոց: Ընտրողներին պետք է կոչ անել ամբողջ

գործընթացի ժամանակ դիմակներով ծածկել իրենց բերանը և քիթը՝ շնչառական կաթիլների տարածումը նվազեցնելու համար: Եթե առկա է պրոֆեսիոնալ դիմակների սղություն, ընտրողները կարող են օգտագործել կտորից ինքնաշեն դիմակներ՝ պատրաստված այնպիսի բամբակյա խիտ գործվածքներից, ինչպիսիք են մդդակած կտորը կամ բամբակյա սավանը:

COVID-19-ով ախտորոշված անձինք, ովքեր ի վիճակի են գնալ ընտրության, պետք է այցելեն հատուկ ընտրատեղամասեր, օգտվեն հատուկ հերթերից և ընտրախցիկներից կամ այցելեն ընտրատեղամաս հատուկ ժամերի՝ առողջ մարդկանց հետ շփումից խուսափելու համար: Այդ տեղամասերի աշխատակիցները պետք է ապահովված լինեն լրացուցիչ անձնական պաշտպանիչ միջոցներով, ինչպես, օրինակ, մեկանգամյա օգտագործման արտահագուստները և բժշկական պաշտպանիչ դիմակները: ԸՎՄ-ները պետք է ապահովեն, որ այդ տեղամասերի աշխատակիցներն իրենց հարմարավետ զգան այդ պայմաններում և դիտարկեն նրանց համար հավելյալ խրախուսման միջոցների տրամադրման հնարավորությունը:

ԸՎՄ-ները պետք է ոխակային խմբում գտնվող անձանց քվեարկության համար հատկացնեն առանձին ժամանակահատված կամ կազմակերպեն հատուկ հերթեր՝ կրճատելու հանրային վայրերում նրանց գտնվելու ժամանակամիջոցը:

Դիտարկումներ ընտրողների ինքնության ստուգման և քվեարկության վերաբերյալ

Տարբեր երկրներ ունեն ընտրողների ինքնության ստուգման տարբեր պահանջներ և քվեարկության տարբեր մեթոդներ: Ընտրողների ինքնության ստուգման մեթոդները կարող են ներառել, օրինակ, մատնահետքերի սկանավորումը, նույնականացման քարտի ներկայացումը կամ ընտրացուցակում ստորագրությունը: Քվեարկությունը կարող է իրականացվել քվեաթերթիկներում նշագրման կամ էլեկտրոնային քվեարկության մեքենաների միջոցով: Դրանցից գրեթե բոլորը ենթադրում են առարկաների հետ շփում: Ինչպես ֆոմիտների կանխարգելման բոլոր մյուս միջոցառումների դեպքում, ընտրողների ինքնության ստուգման և քվեարկության գործընթացների ժամանակ ոխակերը մեղմելու առաջարկությունները նախատեսված են նվազեցնելու առարկաներին ու մակերևույթներին դիպչելու և դրանք շոշափելու անհրաժեշտությունը, ապահովելու, որ վարակված անձինք չաղտոտեն այն առարկաները, որոնց պետք է դիպչեն այլ անձինք կամ ապահովելու առարկաների ախտահանումը՝ նախքան այլոց կողմից դրանց օգտագործումը:

Անձի նույնականացման քարտի դեպքում ոչ հարկի շոշափումից հնարավոր է խուսափել վարքագծի այնպիսի կանոնների մշակման միջոցով, որի համաձայն յուրաքանչյուր քվեարկող, նախքան անհրաժեշտ հեռավորությամբ հետ քայլ անելը, իր փաստաթղթերը դնում է ընտրատեղամասի սեղանի ախտահանված տարածքում, այնպես որ ընտրատեղամասի աշխատակիցը կարողանա մոտենալ փաստաթղթերին և, առանց դրանց դիպչելու, ստուգի անունը, լուսանկարը և ստորագրությունը: Եթե անձի նույնականացման համար պահանջվում է ստորագրություն կամ եթե ընտրողները պետք է նշումներ կատարեն քվեաթերթիկում, ապա ԸՎՄ-ները կարող են տրամադրել մեկանգամյա օգտագործման գրիչներ, կոչ անեն ընտրողներին իրենց հետ բերել գրիչ կամ ախտահանեն գրիչները յուրաքանչյուր մասնակցից հետո, ինչն առավել ժամանակատար լուծում է: Խորհուրդ է տրվում նաև ձեռքերն ախտահանել նախքան ընթացակարգերը՝ գրանցում կատարող աշխատակիցների համար առկա ոխակերը նվազեցնելու նպատակով: Ընտրողները պետք է նաև լավ չորացնեն իրենց ձեռքերը՝ թուղթը չվնասելու համար:

Կենսաչափական սկաներների և քվեարկության էլեկտրոնային մեքենաների մեծ մասը պահանջում են, որ ընտրողները դիպչեն էկրանին: Ինչպես նշվել է ընտրողների կենսաչափական գրանցման սարքերի վերաբերյալ առաջարկություններում, ԸՎՄ-ները պետք է կապ հաստատեն արտադրող ընկերությունների հետ՝ մանրամասն ցուցումներ ստանալու համար այն մասին, թե որ արտադրանքները կարող են օգտագործվել և ինչպես դրանք ճիշտ օգտագործել՝ սարքերն ախտահանելու համար՝ առանց դրանք վնասելու: Մատնահետքերի ստացման և դեմքի ճանաչման անհպում տեխնոլոգիաները, հնարավորության դեպքում,

շատ ավելի լավ լուծում են, քանզի դրանք չեզոքացնում են ֆոմիտների հետ շփման ռիսկը: Էլեկտրոնային քվեարկության մեքենաները, որպես կանոն, ևս պահանջում են, որ ընտրողները դիպչեն էկրաններին կամ կոճակներին, ուստի ԸՎՄ-ները պետք է տեղեկացված լինեն, թե ինչպես ախտահանել այդ սարքերը՝ առանց դրանք վնասելու, կամ օգտագործեն մեկանգամյա պաշտպանիչ թաղանթ կամ այլ թափանցիկ նյութեր՝ այդ մակերևույթների հետ ուղղակի շփումից խուսափելու համար:

Ընտրողներին նշելու համար չմաքրվող թանաքի օգտագործման դեպքում, ԸՎՄ-ները պետք է կոչ անեն ընտրողներին ախտահանել իրենց ձեռքերը սահմանված միջոցներից որևէ մեկով և դրանք լավ չորացնեն՝ նախքան թանաքը կքսվի իրենց մատներին և եղունգներին: Արդյունավետության ապահովման տեսակետից՝ ընտրողները պետք է թողնեն, որպեսզի թանաքը չորանա, ապա ախտահանեն իրենց ձեռքերը: Հնարավորության դեպքում, ԸՎՄ-ները պետք է նախապատվություն տան այնպիսի թանաքների, որոնք ապահովում են ներկառուցված տարաներում, ինչպես, օրինակ, շշերում՝ նվազեցնելու ընտրատեղամասի աշխատակիցների և ընտրողների միջև շփման անհրաժեշտությունը⁴⁸:



Չմաքրվող թանաքը կարող են քսել կամ ընտրատեղամասի աշխատակիցները կամ ընտրողներն իրենք անձամբ: Ավելի նախընտրելի է, որ այն քսեն հատուկ աշխատակիցները՝ նվազեցնելու միջանձնային շփումները:

Դիտարկումներ օժանդակ քվեարկության վերաբերյալ

Որոշ ընտրողների, հատկապես՝ սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց, համար կարող են պահանջվել օժանդակ մեխանիզմներ կամ այլ անձի օգնություն քվեարկության ժամանակ: Եթե ընտրողների ինքնուրույն և գաղտնի քվեարկությունն ապահովելու համար օգտագործվեն ականջակալներ, շոշափելի քվեաթերթիկներ կամ այլ օժանդակ միջոցներ, ապա այդ սարքերը կամ նյութերը պետք է լավ ախտահանվեն յուրաքանչյուր օգտագործողից հետո: Այլ անձի օգնության անհրաժեշտության դեպքում, ամենայն հավանականությամբ, հնարավոր չի լինի պահպանել սահմանված սոցիալական հեռավորությունը: Ուստի, երկուսն էլ պետք է կրեն անձնական պաշտպանիչ միջոցներ, ինչպես, օրինակ, դիմակներ կամ պաշտպանիչ վահաններ, և ախտահանեն իրենց ձեռքերը նախքան քվեարկությունը և դրանից հետո:



Նեպալում կնոջն օժանդակում են քվեարկության ժամանակ: Օժանդակ քվեարկության ժամանակ սոցիալական հեռավորության պահանջները ոչ միշտ է հնարավորել բավարարել, ուստի խորհուրդ է տրվում կրել անձնական պաշտպանիչ միջոցներ:

Դիտարկումներ սանհանգույցների վերաբերյալ

Սանհանգույցներն առանձնահատուկ մարտահրավեր են զանգվածային կուտակումների ժամանակ, քանզի փակ վայրերում դժվար է վերահսկել մարդկանց վարքագիծը: Բացի այդ, այդպիսի տարածքներում առավել մեծ է մարմնական հեղուկների փոխանակման վտանգը: Ամենայն հավանականությամբ, այն անձինք, ովքեր ընտրությունների ժամանակ իրենց վատ կզգան (օրինակ, հազի առաջացման դեպքում), ևս կգնան այնտեղ: Ձեռքերի լվացման գործողությունն ավելի հեշտ դարձնելու և կուտակումներից խուսափելու համար՝ բոլոր սանհանգույցների դրսում պետք է տեղադրվեն ձեռքերի լվացման կամ ախտահանման կետեր՝ օճառի կամ ալկոհոլային հիմքով լուծույթների առկայությամբ: Մշակութային առանձնահատկություններից ելնելով՝ այդ կետերը կարող են առանձնացվել ըստ սեռերի: Հնարավորության դեպքում պետք է լինեն նաև սեռային առումով չեզոք սանհանգույցներ: Այդ կետերի մոտ պետք է տեղադրված լինեն նաև պաստառներ՝ ցուցումներով և հիշեցումներով այն մասին, թե ինչպես ճիշտ և մանրակրկիտ ախտահանել ձեռքերը:

Դիտարկումներ ընտրատեղամասերի անվտանգության վերաբերյալ

Մի շարք երկրներ տեղակայում են անվտանգության ուժեր՝ ընտրությունների ժամանակ ընտրատեղամասերում խաղաղ պայմաններ և քաղաքակիրթ վարագրիժ ապահովելու նպատակով: Հանրային առողջապահական ճգնաժամի պայմաններում այդ ուժերի աշխատանքն ավելի է բարդանում՝ ճնշումների և ընտրողների շրջանում առկա վախերի պատճառով, ինչը կարող է հանգեցնել կոնֆլիկտի սրացմանը: Լարվածությանը գումարվում է նաև այն ընկալումը, որ յուրաքանչյուր ոք կարող է ներկայացնել առողջության համար սպառնալիք: Ուստի, ԸՎՄ-ները պետք է ձեռնարկեն նախազգուշական միջոցներ՝ կանխելու, որ ընտրողները կամ թեկնածուներն օգտվեն այդ իրավիճակից: Անվտանգության ուժերը պետք է անցնեն հատուկ վերապատրաստման դասընթացներ՝ ռիսկերի նվազեցման միջոցառումների և դրանց իրականացման վերաբերյալ՝ առանց սեփական և իրավախախտ անձանց առողջության վտանգման: Կարևոր է, որ նույնիսկ սոցիալական հեռավորություն և այլ կանոններ պարտադրելիս՝ անվտանգության ուժերը չկիրառեն մեծ ուժ:

Դիտարկումներ թափոնների վերաբերյալ

Թեև մինչ օրս չկա որևէ ապացույց թափոնների, այդ թվում՝ առողջապահական թափոնների, միջոցով COVID-19 վիրուսի տարածման վերաբերյալ, այդուհանդերձ անձանց և մակերևույթների ախտահանման համար օգտագործվող բոլոր պարագաները, ինչպես նաև չախտահանվող, մեկանգամյա օգտագործման առարկաները (օրինակ, մեկանգամյա օգտագործման գրիչներ, պաշտպանիչ թաղանթներ և այլն) պետք է դիտարկվեն որպես պոտենցիալ ֆոմիտներ, հավաքվեն համապատասխան տարաներում և տոպրակներում: Հնարավոր վարակված թափոններից ազատումը պետք է իրականացվի երկրի առողջապահական համակարգի պետական մարմինների սահմանած ցուցումների համաձայն: Ընտրությունների ժամանակ թղթե անձեռոցիկները, ախտահանիչ անձեռոցիկները, ձեռնոցները, դիմակները, մեկանգամյա օգտագործման գրիչները, պաշտպանիչ թաղանթները և այլ թափոնները պետք է գցվեն համապատասխան տարաներում կամ տոպրակներում⁴⁹: Ընտրատեղամասի աշխատակիցները և հավաքարարները պետք է կրեն ավելի ապահով ձեռնոցներ և դիմակներ՝ թափոնը մոտակա բուժհաստատություն, վարակված թափոնների հեռացման հաստատություն կամ մշակման այլ վայր տեղափոխելու համար: Այդ գործընթացը պետք է հենվի առողջապահության ոլորտի պետական մարմինների անմիջական ցուցումների վրա:

Դիտարկումներ քվեարկության օրերի ընդլայնման վերաբերյալ

Ինչպես արդեն նշվել է, ընտրատեղամասերի ներսում հերթերը և այլ ընթացակարգերը կարող են մարդկանց ենթարկել մեծ ռիսկերի՝ կապված միջանձնային շփումների և շնչառական կաթիլների փոխանցման հետ: Այդ ընթացակարգերի ժամանակ սոցիալական հեռավորության պահպանումը կարելի է ավելի լավ կառավարել մարդկանց քանակի կրճատման դեպքում, սակայն որևէ մեկը չպետք է զրկվի իր ընտրական իրավունքից: Եթե իրավական դրույթները թույլ են տալիս, ապա ԸՎՄ-ները կարող են դիտարկել քվեարկության ժամկետների երկարացման հնարավորությունը, որպեսզի յուրաքանչյուր օր քիչ թվով ընտրող այցելի ընտրատեղամաս: ԸՎՄ-ները կարող են կազմակերպել ընտրազանգվածի բաժանման գործընթացը, օրինակ, ըստ ընտրողների անվան սկզբնատառերի կամ հասցեների՝ ընտրողների հավասար բաշխվածությունն ապահովելու համար:

Սոցիալական հեռավորության պահպանումը կարելի է ավելի լավ կառավարել մարդկանց քանակի կրճատման դեպքում, սակայն որևէ մեկը չպետք է զրկվի իր ընտրական իրավունքից:

Դիտարկումներ էլեկտրոնային ու փոստային քվեաթերթիկների և հեռակա կարգով քվեարկության վերաբերյալ

Եթե երկրի իրավական շրջանակները թույլ են տալիս, ապա քվեաթերթիկները կարելի է ուղարկել էլեկտրոնային փոստով կամ դրանք նետել մայթերերին տեղակայված քվեաթերթիկների արկղեր՝ քվեարկության ժամանակ հերթերից և վարակման ռիսկերից փուսափելու համար: Թեև այս մեթոդների դեպքում ընտրողների և ընտրատեղամասերի աշխատակիցների շրջանում վարակման ռիսկերն շատ ավելի փոքր են, ԸՎՄ-ները պետք է, այդուհանդերձ հաշվի առնեն մի քանի գործոններ: Օրինակ, վիրուսները և պաթոգենները կարող են որոշակի ժամանակահատված մնալ տարբեր մակերևույթների վրա, ինչը նշանակում է, որ դրանք կարող են պահպանվել նաև քվեաթերթիկների կամ ծրարների վրա և վարակել ընտրողներին կամ ընտրատեղամասի այն աշխատակիցներին, ովքեր ստանում կամ հաշվարկում են քվեները: Կորոնավիրուսի դեպքում վերջին ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վիրուսը կարող է թղթի վրա պահպանվել 3 ժամից մինչև 5 օր, չնայած, նույնիսկ օրեր անց ակտիվ պաթոգենների քանակը կկազմի սկզբնական վիրուսի մոտ 0,1 տոկոսը⁵⁰: Որպես նախազգուշական միջոց՝ քվեարկողները պետք է լավ ախտահանեն իրենց ձեռքերը՝ քվեաթերթիկին և ծրարին դիպչելուց հետո և ծրարի սուսինձն ակտիվացնելու համար օգտագործեն ոչ թե թուք, այլ ինքնասոսնձվող ծրար կամ խոնավ սպունգ: Նրանք կարող են նաև դրանց չդիպչել առնվազն 5 օր՝ նախքան դրանց հանձնումը:

Քվեների հաշվարկ և արդյունքների ամփոփում

Դիտարկումներ ընտրատեղամասերում քվեների հաշվարկման ժամանակ քվեաթերթիկներին և արձանագրություններին դիպչելու վերաբերյալ

Մի շարք երկրներում ընտրական արդյունքների ամփոփման գործընթացը մեկնարկում է ընտրատեղամասերում տեղամասային աշխատակիցների ձեռքով քվեաթերթիկների հաշվարկմամբ: Դրանից հետո առանձին տեղամասերից ստացված արդյունքների ցուցակները միավորվում են, հաճախ՝ վարչական շր-

ջանների մակարդակով, իսկ արդյունքների մասին հայտարարում է վերադարձնող աշխատակիցը: Որոշ երկրներ օգտագործում են նույն պահին արդյունքներն արձանագրող էլեկտրոնային քվեարկության մեքենաներ, որոնք ավտոմատ կերպով հաշվում են քվեները և արդյունքները փոխանցում Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ դրանց ստուգման և համակարգման համար: Որոշ դեպքերում ընտրողները նշում են կատարում քվեաթերթիկում, որն այնուհետև սկանավորվում և մշակվում է:

Եթե քվեների հաշվարկումն իրականացնում են ընտրատեղամասի աշխատակիցները, ապա անվտանգության նկատառումներով անհրաժեշտ է կատարել ընդհանուր գործընթացին վերաբերող որոշ ճշգրտումներ: Դրանցից մեկը վերաբերում է քվեների ստուգման ժամանակ գրասեղանի շուրջ հավաքված աշխատակիցների միջև սոցիալական հեռավորության պահպանմանը: Քանզի կուսակցությունների լիազոր ներկայացուցիչները և դիտորդները նույնպես պետք է կատարեն իրենց պարտականությունները արդյունքների գործընթացի այս կարևոր փուլի ընթացքում, քվեաթերթիկներն առանձին-առանձին պետք է ցույց տրվեն նաև նրանց՝ առանց թույլատրելու դրանց դիպչելու նախքան դրանց տեղադրումը քվեների համապատասխան տրցակում: Դա մեծացնում է թափանցիկությունը, սակայն դանդաղեցնում է հաշվարկման գործընթացը: Տվյալ տեղամասում քվեների հաշվարկից և արդյունքների ամփոփումից հետո մի շարք պաշտոնատար անձինք, կուսակցության լիազոր ներկայացուցիչներն ու դիտորդները ստորագրում են արձանագրությունները: Յուրաքանչյուր ստորագրող անձ պետք է օգտագործի իր գրիչը և փաստաթուղթը ստորագրի՝ պահպանելով անհրաժեշտ սոցիալական հեռավորության պահանջը:

Դիտարկումներ քվեաթերթիկների և այլ ընտրական նյութերի տեղափոխության վերաբերյալ

Ընտրական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները, ընտրացուցակները և քվեաթերթիկները, ընտրատեղամասերից սովորաբար տեղափոխվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գրասենյակ՝ ամփոփման և արդյունքների հայտարարման համար: Դրանք սովորաբար տեղափոխվում են պլաստիկե զիփ փականով տոպրակներում և պահվում են կապարակնքված քվեատուփերի մեջ: Դրանց տեղափոխությունը հաճախ իրականացվում է ընտրատեղամասի աշխատակազմի ներկայացուցիչների, դիտորդների, կուսակցությունների լիազոր ներկայացուցիչների և ոստիկանության ուղեկցությամբ: Նյութերի տեղափոխության ժամանակ վարակի տարածման ռիսկերը նվազեցնելու համար այդ գործընթացում ներգրավված բոլոր անձինք պետք է կրեն դիմակներ: Հնարավորության դեպքում ԸՎՄ-ները պետք է դիտարկեն մշտադիտարկման գործիքակազմի կիրառման անհրաժեշտությունը, ինչպես, օրինակ, տեսախցիկներ և GPS համակարգեր՝ դիտորդների և կուսակցությունների լիազոր ներկայացուցիչներին հնարավորություն տալով հեռակա կարգով վերահսկել նյութերի տեղափոխման ընթացքը:

Դիտարկումներ արդյունքների ամփոփման գործընթացների և մեխանիզմների վերաբերյալ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատանքն ընտրությունների արդյունքների ամփոփման գործում հաճախ պահանջում է աշխատակիցների մեծ թվաքանակ՝ բոլոր ընտրատեղամասերից ընտրական նյութերի ստացման, մշակման, ամփոփման և պահպանման համար: Անվտանգության աշխատակիցների թվաքանակը ևս երբեմն կարող է լինել բավական մեծ: Ընդհանուր առմամբ, սոցիալական հեռավորության պահպանման պայմանը կարևոր է արդյունքների ամփոփման յուրաքանչյուր փուլի ժամանակ: Ընտրատեղամասի անձնակազմը հաճախ ստիպված է լինում սպասել՝ նյութերի փոխանցման ժամանակ առաջացած հերթերի պատճառով: Նյութերը գրանցելուց հետո անձնակազմը դրանք փոխանցում է ստուգողներին, իսկ դրանց հաշվարկից ու մուտքագրումից հետո դրանք պահվում են այնքան ժամանակ, քանի դեռ չի սկսվել

արդյունքների ամփոփման գործընթացը: Երբ արդյունքներն ի վերջո ամփոփվում և վավերացվում են, արդյունքների վերաբերյալ ձևաթղթերը ստորագրվում են և սկանավորվում ԸՎՄ-ների շտաբեր փոխանցելու համար: Որոշ դեպքերում արդյունքների ամփոփման համար օգտագործվում են առցանց համակարգեր: Այդ գործընթացներից յուրաքանչյուրը ենթադրում է տարբեր ձևաթղթերի վերանայում և ստորագրում, ինչպես նաև համակարգիչների օգտագործում՝ տվյալների մուտքագրման, սկանների օգտագործում՝ արդյունքների տարածման և պրոյեկտորների օգտագործում՝ դիտորդներին և կուսակցությունների լիազոր ներկայացուցիչներին արդյունքների ընթացիկ ներկայացման համար: Այդ գործընթացների ժամանակ պետք է հաշվի առնվեն նախորդ բաժիններում ներկայացված ստանդարտ առաջարկությունները՝ սոցիալական հեռավորության, ձեռքերի և սարքերի ախտահանման և անձնական պաշտպանիչ միջոցների օգտագործման վերաբերյալ:

Մշտադիտարկում և որակի վերահսկում

ԸՎՄ-ների կողմից իրականացվող մշտադիտարկման և գնահատման գործընթացները պետք է կենտրոնանան ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման աստիճանի մշտադիտարկման վրա: Ընտրության կազմակերպիչները պետք է մշակեն և լրացնեն կոնկրետ միջոցառումների մշտադիտարկման ստուգաթերթիկներ, հատկապես՝ ընտրությունների օրը: Հնարավորության դեպքում ստուգաթերթիկներում լրացված տվյալները պետք է ենթարկվեն ավելի բարձր մակարդակի վերահսկողության՝ տեղային ստուգումների միջոցով: Այդ ճանապարհով կարելի է սահմանված պահանջներին համապատասխանությունը ենթարկել պարբերական ստուգման և հավաքել տվյալներ կենտրոնական մակարդակով՝ հայտնաբերելու համակարգային խախտումները:

Թեև հնարավոր չէ ապացուցել, թե COVID-19-ի քանի նոր դեպք է հնարավոր եղել կանխել ռիսկերի նվազեցմանն ուղղված մեթոդների արդյունավետ իրականացման արդյունքում, այդուհանդերձ ընտրական միջոցառումների առաջին 14 օրում գրանցված բնականոն կամ ավելի ցածր օրինաչափությունը ցույց է տվել, որ դրանք չեն նպաստել նոր օջախների առաջացմանը:

Ծանոթագրություններ

1. Global Impact of COVID-19 on Elections. (March 20, 2020). Retrieved from <https://www.ifes.org/publications/global-impact-covid-19-elections>.
2. Buril, F. Darnolf, S. Low Voter Turnouts, Fear, Disinformation and Disrupted Supply Chains: How Election Commissions Are Unprepared for COVID-19 (2020, March 27). IFES. Retrieved from <https://www.ifes.org/news/low-voter-turnouts-fear-disinformation-and-disrupted-supply-chains>
3. Keilman, J. (2020, April 13). “After Chicago poll worker dies from COVID-19 and others test positive, city warns voters they might have been exposed to virus at polling places. *Chicago Tribune*. Retrieved from <https://www.chicagotribune.com/coronavirus/ct-chicago-poll-worker-dies-covid-cornavirus-20200413-rz-55vqpo6jfbxn7e4i6vkj6n2y-story.html>.
4. Modes of transmission of virus causing COVID-19: implications for IPC precaution recommendations. (n.d.). World Health Organization. Retrieved from <https://www.who.int/news-room/commentaries/detail/modes-of-transmission-of-virus-causing-covid-19-implications-for-ipc-precaution-recommendatio>.
5. How Coronavirus Spreads. (2020, April 13). U.S. Centers for Disease Control and Prevention. Retrieved from <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/prevent-getting-sick/how-covid-spreads.html>.
6. Definitions: emergencies. (2014, November 17). World Health Organization. Retrieved from <https://www.who.int/hac/about/definitions/en/>
7. Rosenthal U, Charles MT, & ‘t Hart, P. (Eds). (1989). *Coping with crises: the management of disasters, riots and terrorism*. Springfield: Charles C. Thomas.
8. Marisam, J. (2010). Judging the 1918 election. *Election Law Journal*, 9(2), 141-152.
9. Banbury, A. (2020, April 8). Opinion: Elections and COVID-19 - what we learned from Ebola. *Devex*. Retrieved from <https://www.devex.com/news/opinion-elections-and-covid-19-what-we-learned-from-ebola-96903>
10. Delury, J. (2020, April 16). How Democracy Won the World’s First Coronavirus Election. *New York Times*. Retrieved from <https://www.nytimes.com/2020/04/16/opinion/south-korea-election-coronavirus.html>
11. Taylor, D. B. (2020, April 28). How the Coronavirus Pandemic Unfolded: a Timeline. *The New York Times*. Retrieved from <https://www.nytimes.com/article/coronavirus-timeline.html>
12. WHO Director-General’s opening remarks at the media briefing on COVID-19 - 11 March 2020. (n.d.). Retrieved from <https://www.who.int/dg/speeches/detail/who-director-general-s-opening-remarks-at-the-media-briefing-on-covid-19---11-march-2020>
13. What is a coronavirus? World Health Organization Sri Lanka. Retrieved from https://www.who.int/docs/default-source/inaugural-who-partners-forum/coronavirus-poster-english-srilanka.pdf?sfvrsn=289dedc3_0
14. Symptoms of Coronavirus. (2020, March 20). U.S. CDC. Retrieved from <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/symptoms-testing/symptoms.html>
15. Huang, P. (2020, April 13). What We Know About The Silent Spreaders Of COVID-19. *NPR*. Retrieved from <https://www.npr.org/sections/goatsandsoda/2020/04/13/831883560/can-a-coronavirus-patient-who-isnt-showing-symptoms-infect-others>
16. Mandavilly, A. (2020, April 20). Infected but Feeling Fine: the Unwitting Coronavirus Spreaders. *The New York Times*. Retrieved from <https://www.nytimes.com/2020/03/31/health/coronavirus-asymptomatic-transmission.html>

17. Columbia Health, & Columbia Health. (2020, March 26). COVID-19 (Novel Coronavirus): Frequently Asked Questions. Retrieved from <https://preparedness.columbia.edu/news/2019-novel-coronavirus-frequently-asked-questions>
18. Symptoms of Coronavirus. (2020, March 20). Retrieved from <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/symptoms-testing/symptoms.html>
19. Modes of transmission of virus causing COVID-19: implications for IPC precaution recommendations. (n.d.). WHO Retrieved from <https://www.who.int/news-room/commentaries/detail/modes-of-transmission-of-virus-causing-covid-19-implications-for-ipc-precaution-recommendations>
20. How Coronavirus Spreads. (2020, April 13). U.S. CDC. Retrieved from <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/prevent-getting-sick/how-covid-spreads.html>
21. Based on information from Kampf G, Todt D, Pfaender S, Steinmann E. Persistence of coronaviruses on inanimate surfaces and their inactivation with biocidal agents. *J Hosp Infect.* 2020;104(3):246–251. doi:10.1016/j.jhin.2020.01.022. The longevity of the virus was measured at room temperature (20-22 °C or 68-72 °F)
22. Advice for public. (n.d.). WHO. Retrieved from <https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/advice-for-public>
23. Social Distancing, Quarantine, and Isolation. (2020, April 4). U.S. CDC. Retrieved from <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/prevent-getting-sick/social-distancing.html>
24. Bourouiba, L. (2020). Turbulent gas clouds and respiratory pathogen emissions: potential implications for reducing transmission of COVID-19. *Jama.*
25. Frequently Asked Questions About Respiratory Hygiene/Cough Etiquette. Virginia Department of Health. Retrieved from https://www.vdh.virginia.gov/content/uploads/sites/3/2016/01/RespiratoryHygiene-CoughEtiquette_FAQ.pdf
26. Interim recommendations on obligatory hand hygiene against transmission of COVID-19. (n.d.). WHO. Retrieved from <https://www.who.int/who-documents-detail/interim-recommendations-on-obligatory-hand-hygiene-against-transmission-of-covid-19>
27. Hand hygiene in health care in the context of Filovirus disease outbreak response. (2020, March 12). WHO. Retrieved from <https://www.who.int/csr/resources/publications/ebola/hand-hygiene/en/>
28. List N: Disinfectants for Use Against SARS-CoV-2. (2020, April 24). Retrieved from <https://www.epa.gov/pesticide-registration/list-n-disinfectants-use-against-sars-cov-2>
29. Chan, K. H., Peiris, J. S., Lam, S. Y., Poon, L. L. M., Yuen, K. Y., & Seto, W. H. (2011). The effects of temperature and relative humidity on the viability of the SARS coronavirus. *Advances in virology*, 2011.
30. Ընտրությունների հետաձգման իրավական կողմերը կքննարկվեն այս շաբթի առաջիկա փաստաթղթում, Ընտրական գործընթացները հետաձգելու կամ փոփոխելու վերաբերյալ իրավական և սահմանադրական նկատառումներ:
31. Ellena, K. The Legal Quagmire of Postponing or Modifying Elections. (2020, April 14). IFES. Retrieved from <https://www.ifes.org/news/legal-quagmire-postponing-or-modifying-elections>
32. Lipsitch, M. (2020). Seasonality of SARS-CoV-2: Will COVID-19 go away on its own in warmer weather? Center for Communicable Disease Dynamics. Retrieved from <https://ccdd.hsph.harvard.edu/will-covid-19-go-away-on-its-own-in-warmer-weather/>
33. Global surveillance for COVID-19 caused by human infection with COVID-19 virus – Interim guidance. (2020,

March 20). WHO. Retrieved from <https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/331506/WHO-2019-nCoV-SurveillanceGuidance-2020.6-eng.pdf>

34. Palca, J. (2020, March 6). Respirators Key To Coronavirus Battle But They Must Be Worn Correctly. *NPR*. Retrieved from <https://www.npr.org/2020/03/06/812789168/respirators-key-to-coronavirus-battle-but-they-must-be-worn-correctly>
35. Use Cloth Face Coverings to Help Slow Spread. (2020, April 13). U.S. CDC. Retrieved from <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/prevent-getting-sick/diy-cloth-face-coverings.html>
36. Groth, L., & Groth, L. (2020, April 8). Your Gloves Probably Aren't Helping You Prevent Coronavirus at the Grocery Store. Retrieved from <https://www.health.com/condition/infectious-diseases/coronavirus/should-you-wear-gloves-to-the-grocery-store>
37. Groth, L., & Groth, L. (2020, April 8). Your Gloves Probably Aren't Helping You Prevent Coronavirus at the Grocery Store. Retrieved from <https://www.health.com/condition/infectious-diseases/coronavirus/should-you-wear-gloves-to-the-grocery-store>
38. Rauhala, E. (2020, March 14). Some countries use temperature checks for coronavirus. Others don't bother. Here's why. *The Washington Post*. Retrieved from https://www.washingtonpost.com/world/coronavirus-temperature-screening/2020/03/14/24185be0-6563-11ea-912d-d98032ec8e25_story.html
39. Saey, T. H. (2020, April 16). COVID-19 may be most contagious one to two days before symptoms appear. Retrieved from <https://www.sciencenews.org/article/coronavirus-covid-19-infection-contagious-days-before-symptoms-appear>
40. Բացի լուսանկարից, թեկնածուների գրանցման դիմումները հաճախ ներառում են կուսակցական պատկանելիության վերաբերյալ տեղեկատվություն, խորհրդանիշներ, աջակցության ստորագրությունների վերաբերյալ ապացույցներ և թեկնածուի համար նախատեսված վճարներ:
41. COVID-19-ի և ապատեղեկատվական քարոզչության միջև կապի համապարփակ վերլուծությունը կներկայացվի այս շաբթի առաջիկա փաստաթղթում:
42. Niebaum, K., Cunningham-Sabo, L., & Bellows, L. (2015). Developing Effective Educational Materials Using Best Practices in Health Literacy. *Journal of Extension*, 53(4), n4.
43. How is the national electoral register created? (n.d.). International IDEA. Retrieved from <https://www.idea.int/data-tools/question-view/735>
44. Գոյություն ունեն տարբերի ձևերի և տարբեր նյութերից պատրաստված անձի ինքնությունը հաստատող փաստաթղթեր, այդ թվում՝ պարզ թղթից պատրաստված քարտեր, սառը լամինացված ժամանակավոր նույնականացման քարտեր և պոլիվինիլքլորիդային, ճկուն ավանդական քարտեր: Որոշ երկրներում, ինչպես, օրինակ Զիմբաբվեն, նույնականացման քարտերը մետաղյա են:
45. Vendor and Manufacturer Guidance on Cleaning Voting Machines and Other Election Technology: U.S. Election Assistance Commission. (n.d.). Retrieved from <https://www.eac.gov/election-officials/vendor-and-manufacturer-guidance-cleaning-voting-machines-and-other-election>
46. Behrens, C.; Rouan, R. (2020, March 12). Ohio elections boards frantically seeking poll workers due to coronavirus outbreak. *The Columbus Dispatch*. Retrieved from <https://www.dispatch.com/news/20200312/ohio-elections-boards-frantically-seeking-poll-workers-due-to-coronavirus-outbreak>
47. Հավատարմագրման էլեկտրոնային գործընթացի համար տե՛ս the 2019 Presidential election in Afghanistan (accessed April 19, 2020).
48. Չմաքրվող թանաքի օգտագործման ռիսկերը նվազեցնելու վերաբերյալ մանրամասները տե՛ս IFES-ի



International Foundation
for Electoral Systems

